



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material




891.99

U-44







5-43

ԱՐԱՔՍԻԱ

ՀԱՐՈՒԱԾ

ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐՈՅ

Ա. Բ.



ՈՂԵՐԳՈՒԹԵՐԵՆ



ՅՈՐԻՆԵԱՑ

ՆՐՊՍՈՒՄՆԻ ՄԵԶՊՈՒՐԵԱՆ



ՏՊԳՐ. ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսեր

1861

891.99  
5-42

1001





5

Ա Ր Ա Ք Ս Ի Ա



891.99

Printed In Turkey

44 41  
Ա Ք Ա Ք Ս Ի Ա

u ~

ՀԱՐՈՒԱԾ

Գ Ա Ր Ն Ա Ն Գ Ի Ա Ե Ր Ո Յ



ՈՂՐԵՐԳՈՒԹԻՒՆ



Յ օ ր ի ն է ա ց

ՆԵՐՍԷՍ ՍԱՀԱԿ ՄԷՉՊՈՒՐԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԳԻՒՐԳՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՖԻՆԱՆՏԻՆՆԵՐ

—1861—

377-GR

814  
40



ԱՌ

ԾԱՂԿԱՀԱՍՍԿ

ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՏԵՆՁ

ԵՂԲԱՅՐ ԻՄ ՀԱՐԱԶԱՏ

ՍՍ.ՀՍ.Կ ՍՍ.ՀՍ.ԿԵԱՆ

ՆՈՒԷՐ

ՄԷԲՈՅ

~~3067~~

737-42

५१  
०११०१  
५१  
०११०१




## ՅԱՌԱՋԱԲԱՆ



Գիտութեանց մէջ չկայ անանկ ախորժելի ու քաղցր ուսում մը, եթէ ոչ բանաստեղծութիւնը, որ բնութեան սքանչելի տեսարաններուն նկարագիրը և մարդուս ներքին պղտցմանց թարգմանը կը սեպուի: Ճարտար նկարիչ մը, որ և իցէ մարմինին ձևը կը նկարէ. բանաստեղծը՝ նոյն անշունչ նկարին կենդանութիւն կուտայ: Բնական է մարդուս բանաստեղծութեան սէրը. և նոյն սէրը շարժեց մեր տկար գրիչը, ասկէց երեք տարի առաջ յանկարծական դիպուածի մը վրայ ողբերգել:

Եւ արդ, քանի մը ուսումնասէր եղբարց խընդրանօք պարտաւորեցանք 'ի լոյս ընծայել նոյն բանահիւսութիւնը, երիտասարդաց պարապոյ ժամերուն զբօսանքի նիւթ մը պատրաստելու փափաքով, և յուսով եմ, որ սիրով կ'ընդունին մեր այս ամենապարզ և փոքրիկ աշխատութիւնը, աւելի ընաիր նիւթոց վրայ երգելու խրախոյս տալով:

CHAPTER 1



The first part of the report is devoted to a general  
 survey of the state of the country at the beginning  
 of the year. It is then divided into three parts,  
 the first of which is devoted to a description of  
 the country, the second to a description of the  
 population, and the third to a description of the  
 commerce. The first part is divided into three  
 sections, the first of which is devoted to a  
 description of the country, the second to a  
 description of the population, and the third to  
 a description of the commerce. The second part  
 is devoted to a description of the population,  
 and the third part to a description of the  
 commerce. The first part is divided into three  
 sections, the first of which is devoted to a  
 description of the country, the second to a  
 description of the population, and the third to  
 a description of the commerce. The second part  
 is devoted to a description of the population,  
 and the third part to a description of the  
 commerce.



## ՎԷՊ



Գարնան եղանակին մեջ մայիս ամսուն, լուսապայծառ. գիշեր մը, Արաքսիա քանի մը օրիորդաց հետ մարգերուն վերայ զբօսելու ելած ըլլալով, գառ. 'ի վայր եւ խորդ ու բուրդ ճամբէ մ' 'ի վար վազած ժամանակը յանկարծ գլխիվար գըլորելով, բոլոր դէմքը արիւնթաթախ կը վիրաւորի: Խելացնոր գետինը փռուած, վերքերուն ցաւէն եւ գլխուն կերած ծանրը հարուածէն յիշողութիւնը կորուսած, զինքը խաւար գիշերոյ մեջ կարծելով, կ'աղերսէ երկնից, լուսնի եւ աստղերուն խաւար աջքերը լուսաւորել. որպէս զի ուր ըլլալը գիտնայ: Կոյս Արաքսիայի բոլրերն սա դիպուածին վրայ սարսա-

փած, ողբալով կը վագեն գետնեն վեր-  
ցընել, բայց չը թողուր մօտենալ, ով ըլ-  
լալնին մոռնալով: Ջանազան երեւակա-  
յութիւններէ եւ ողբերգութենէ յետոյ զը-  
լուխը քիչ մը խաղաղելով կ'ելլէ կը  
նստի:

Աջքերը սրբելով, իբրեւ ամպոց տակ  
կը տեսնէ լուսինը: Չորս դին նայած  
ժամանակը գեղեցիկ բեհեզներով զար-  
դարուած օրիորդներ կ'երեւան, զորս հը-  
րեշտակ կարծելով, շատ մը կասկած-  
ներէ վերջը ով ըլլալնին կը հարցնէ. ո-  
րոնք իրեն քոյրերն ըլլալնին յայտնելով,  
ժանր վերք առնուլը կ'իմացնեն: Արաք-  
սիա վերքին անունը լսածին պէս ցան  
ալ զգալով, խելքը գլխէն կը թռի. մա-  
նաւանդ էրբ կը տեսնէ բոյոր հողը ար-  
եան ծով մը դարձած, կ'իյնայ մէջը կը  
հառաչէ, կը պաղատի ընկերներուն,  
զինքը վերցնել տուն տանիլ: Կ'երթայ

տուն, կ'առնէ հայլին ճեռքը, ուր դեմ-  
քին ադեկտուր վերքերը տեսածին պես,  
վերջին աստիճան յափշտակուած, կը  
սկսի գիշերն 'ի լոյս տխուր ողբեր ընել:

Միտքը կուգան հայրենիքը եւ ծնող-  
քը, որ քանի մը տարիէ 'ի վեր դեռ մա-  
նուկ' նեռաւոր աշխարհ գիտութիւն ուս-  
նելու դրկած էին. հոս անոնցմէ բաժ-  
նուած օրը սիրելի մօրը երգած ողբը կը  
լիշէ. ուսման անցեալ օրերը միտքը կու-  
գան, քէ մինչ կ'աշխատէր իւր սովո-  
րութեանը համեմատ ընտանեացը բարի  
լուրեր հաղորդել, անողորմ բաղդին  
հարուածը չը պակսեցաւ. իւր գլխէն  
պանդխտութեան օրերուն մէջ: Հոս իւր  
շարագրած «Աշխատասիրութեան նկա-  
րագիրը» բերան կը կարդայ, զոր ծնո-  
ղացը դրկելու պատրաստած էր, իբրեւ  
առաջին պտուղ իւր ուսումնասիրու-  
թեանը:

Ժբ

Վերջապես իւր, ծաղիկ կենաց անց-  
եալ եւ ներկայ տխուր վիճակը աջքին  
առջեւը բերելով, քանի մը խօսքով ող-  
բերգութիւնը կ'աւարտէ:

1857

ՀԵՂ.ԻՆՁԿՆ









**ԱՐԱՔԱԹԱ**

**ՀԱՐՈՒԱԾ**

**ԳԱՐՆԱՆ ԳԹՇԵՐՈՅ**



**ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ**



**ՆՈՒԱԳ**

**ԱՌԱՋԻՆ**

Ո՛ւր ես լուսին, ո՛ւր էք աստղեր,

Խոր գիշերոյ լուսաւորներ.

Ո՛ւր մխիթարք ախար սրտից,

Աչեր հրախառ կապտասկ երկնից :

Լուսի՛ն, ո՛ւր է տեսքդ անուշակ,  
Որ ձեռք ծածկեց սեւ ապոց ասկ.  
Ե՛րկինք կանուխ սեւազգեցար,  
Որդեկորոյս զետ հայր ու մայր:  
Ճրագներդ ինչո՛ւ արդ չեմ տեսներ,  
Անո՞նք կուրցան թէ իմ աչեր .  
Ո՞վ դադրեցուց մէկէն ՚ի մէկ,  
Իմ քայլերուս քաջ երթեւեկ:  
Սրդեօք աղեղն, նետեր էին,  
Որ զիս յերկիր տապալեցին .  
Թէ գիշերուան չար ոգիներ  
Եկան շունչս սրտէս կտրել:  
Ո՞վ գիշերոյս յոգնատխուր  
Պահպան հրեշտակ, ո՛ւր շրջիս ո՛ւր .  
Այսպէ՞ս պատուէր տուաւ երկին,  
Որ դու հանգչիս ես տանջուիմ:  
Ո՞ր պահակիդ իս յանձնեցիր,  
Զետ կիսամահ զարնել յերկիր .  
Մերժել աչքէս գողտր լուսին,  
Այս ի՞նչ դու թ ինձ նման կուտին .



Նրկինք հրկինք, որ կը դիտես  
Ներկայ վիճակս իմ աղեկէդ,  
Սուրբ ականջներըդ օ՛ն դարձուր,  
Գիշերային ողբիս տխուր :

Քեզ է աղերսըս քեզ Նրկին,  
Այս սր անգուլթ չար թշնամին  
Մատաղ սրտիս չը խնայած,  
Թողուց աչկունքըս խաւարած :

Ահա զգամ գետին փռուած,  
Քարերու հետ վիրօք թաղուած :

Աչքս արտասունք սրտիկս երած,  
Հեծեծանքով քեզ եմ դիմած :

Անշուշտ ամպեր նախանձակուր,  
Զուարթ ժամերս հեղահամբոյր  
Ագահութեամբ սեւազգեցին,  
Նրկինք ըսէ՛ մէկդի քաշուին :

Պահ մ'առաջուան ժամերս պայծառ,  
Երբ նազէի 'ի գեղ դալար,  
Ո՞ր չար սրտեր չը տանելով,  
Քթէս բերին գարնան օրով :

Ո՞ւր փայլածու աչերդ հրավառ ,  
Տե՛ս Արաքսան անմխիթար .  
Խաւար սգոց ձեռքը մասնած ,  
Դժոխքի տեսքն առջին բացուած :  
Գէթ մէկ աստղիդ երես տեսնել ,  
Ինձ երջանիկ փառք մ'է ճարել .  
Ահա անկէց ալ զուրկ , 'ի զուր ,  
Տեսութիւնս մնայ միշտ կուր :  
Ունենայի թռիչներ ժիր ,  
Գալ ձեր պայծառ գիրկը թառիլ .  
Շնորհուէր ինձի հրաման յերկնից ,  
Քակտել աւրել ամպերու գիծ :  
Դժբաղդի մը սն չոր յոյսեր ,  
Երած սրտէ ելած ծուխեր .  
Հետզհետէ ամեն վայրկեան ,  
Նոր ցաւի մը կսկիծ կուտան :  
Չը կայ տեղէ մ'սչ զութ սչ յոյս ,  
Կամ մոծրի չափ ճրագի լոյս .  
Տեսնել թէ ինչ վէրք եմ առեր ,  
Վրաս առողջ տեղ մնացեր :

Կարծես խոշոր փշոց վրայ ,  
Կը չարհրկի Արաքսիա .  
Իբրեւ խայթիչ եղինճ պլլած ,  
Բոլոր կաշիս է սկրդած :  
Ի՞նչպէս չըսեմ արդ , ո՞ւր լուսին ,  
Ո՞ւր էք աստղեր գարնանային .  
Հիմայ կրնամ չը հառաչել ,  
Մինչ ձեր լոյսէն եմ զրկուեր :  
Ո՞ւր է դալար ելնեմ պարել ,  
Գոնէ հեղ մ'ալ զձեզ տեսնել .  
Միթէ յարկեր իս ծածկեցին ,  
Որ այսպէս մութ տեղեր նսաիմ ,  
Ո՞ Արաքսիա թշուառ աղջիկ ,  
Ճակատագիրդ ապերջանիկ .  
Կանուխ չէ որ այս հարուածներ ,  
Սոսկ քու գլուխ գան քարկոծել :  
Սիրուն բիբեր դեռ չէք բացուիր ,  
Հերիք ընկճած մնամ յերկիր ,  
Մի՞ դոցուիք մի՞ բիբեր շարժուն ,  
Տեսնեմ վիճակս այս իրիկուն :

Միթէ վերջին ժուռ դալս ան էր ,  
Երկնից երեսն ալ չեմ տեսներ .  
Աստուած իմ ցերբ խելացնոր ,  
Կամ մէջ միտին թաւալազլոր :  
Պճնած գլխուս դեղձան մազեր ,  
Որ փռուէին իբր ոսկեթէլ .  
Սրտիս ցաւէն քաշկռտելով ,  
Թողի որ գայ ցրուել ցուրտ հով :  
Չեմ գիտեր ուր երթամ Աստուած ,  
Կարծես տղմին մէջն ընկղմած ,  
Չըկայ ճար մը աղատելու ,  
Գերեզմանս հոն էր բացուելու :  
Որո՞ւ կ'ողբամ որո՞ւ կուլամ ,  
Մինչդեռ ճայնիս լսող չկան .  
Բայց չը կրնայ սիրտս համբեր ,  
Կ'ողբամ մինչ շունչս հասնի առ Տէր :  
Թէ որ Երկինք ստեղծեց զիս ,  
Անշուշտ 'ի գութ կը շարժի յիս .  
Սուտ աշխարհիս փորձանքներն են ,  
Որ մերթ այսպէս մարդը տանջեն :

Ուր որ նախանձը շատ ըլլայ ,  
Հոն տեղ ամեն բան շուտ կ'ըլլայ .  
Արաքսիայի նախանձորդներ ,  
Կոծեցին սիրտն այս չար գիշեր :



# Ն Ո Ւ Ա Ք

## ԵՐԿՐՈՐԴ

---

Ո՛վ լուսաւորք միթէ ձերին ,  
Թէ իմ դէմքիս քօղ ձգեցին .  
Ձեր շողշողուն լոյսն է մարած ,  
Թէ տեսութիւնըս խախանած :  
Դ՞ու գրկեցիր ո՞ արեգակ ,  
Քու անդրադարձ լուսէդ լուսնակ .  
Ի՞նչ սիրտ յանդուգն , որ կը ժխտեա ,  
Երկնից դրած շքանն անդեղծ :  
Այսօր Յեսուայ մը դէմն ելար ,  
Որ հրամայէ անշարժ մնալ .  
Բայց մինչեւ երբ , ինչուան գիշեր ,  
Ձերուաց ցերեկն այնպէս դէպքեր :  
Ո՛վ արեգակ երկնից թագւոր ,  
Արտաշէ՞ս մը ծնաւ հզօր .  
Որուն զօրաց նետած նետեր ,  
Պայծառ երեսդ են խաւարեր :

Աշխարհիս վերջն այս է երկին .

Որ աստղներն 'ի վար թափին ,

Լուսինն առած լոյսէն զրկուի ,

Եւ արեգակը խաւարի :

Ո՛չ . զի այն օր Քարբիէլի

Փողն ամենայն մարդոց հնչի .

Եւ ո՛չ այսպէս անդատաստան ,

Մնալ խաւարն անօգնական :

Դժոխքն անգամ գացած ըլլամ ,

Մեղսակիցներս պէտք է տեսնամ .

Եւ արդ այնչափ անտանելի ,

Յաւ մը չէ կրածս յայս դիշերի :

Եթէ հիմայ հնար մ'ըլլար ,

Մթագնած աչքիս քիչ մը լոյս տալ ,

Անշուշտ լացիս տուած վախճան ,

Կը գտնէի ինձ մէկ դարման :

Միայն անկէց զուրկ եմ Ա՛ստուած ,

Զիյտեմ ինչպէս յանկարծ զրկուած .

Թող դայ տեսնէ երկնից ճրագ ,

Արաքսիայի տխուր վիճակ :

Գնւրս ել գնւրս ել աչացըս լոյս ,  
Հերիք պահուիս մէջ սեւ ամպոց .  
Գարձիր ինծի դարձէ՛ք տեսնամ ,  
Ուր ըլլալս գոնէ գիտնամ :

Տեսնեմ արդ ձեր լուսով պայծառ ,  
Ո՞ւր գլորուեր եմ չարաչար .  
Յամաքի՞ թէ ծովի վրայ ,  
Չար կիրքերու ճիշդ գոհ եղայ .  
Չո՞ւրն եմ ընկած Երկինք յոյս իմ ,  
Ալեաց վրայ կը տատանիմ .  
Երանի՞ թէ յիս խղճալով ,  
Տանին եղերքն օրօրելով :

Ովկիանեայ սեւ փրփուրներ ,  
Տարուբերեն իս վար ու վեր .  
Խոժոռ ալեաց խիստ կատաղած ,  
Ժամանակն է Տէ՛ր իմ Աստուած :

Չկնէրն արդեօք զիս պի՛ կլլեն ,  
Այսօր անոնց ճաշիկն ես եմ .  
Ո՛հ ո՞ր ապահ պորտաբոյծ ձուկ ,  
Կուգայ կլլել խղճով անգութ :



Պիտի կրնայ արդեօք մարսել ,  
Թէ եզերքը տանիլ ձգել .  
Աւազոց հետ կը խառնուիմ ,  
Կամ աղի պէս փշրիմ հալիմ :  
Չկայ ձայն մը լուր տալ ինծի ,  
Ո՛ւր եմ որ կողմը աշխարհի .  
Չեա Մովսէս դեսը ձգեցին ,  
Հոսանքներուն առաջն ընկնիմ :  
Ջրոյ վրայէն չեմ կարող Տէ՛ր ,  
Լողալով ճիշտ ցամաք մ'եկնել ,  
Անշուշտ ծայր մը եզերք մ'ունի ,  
Թէ որ գեան ես ընկեր կ'ըսուի :  
Թէ՛ սչ ալիք զիս հոս ընկճած ,  
Թող ընկղմեն յանդուդ ձգած .  
Վերջ տալով իմ ցաւոցս ամեն ,  
Որ սիրտս հոգիս մէկտեղ ճմլեն :  
Ա՛ստուած ո՛ւր է կոյսն Արաքսիա ,  
Ո՞ր անապատ դաշտին վրայ .  
Չեան հիւսերը զայն կը ծածկեն ,  
Թէ Չերմ խորշակը խորովեն :

Դիակնի պէս այս տեղ փռուած ,  
Մէկին մնաս բարեաւ չըսած .  
Արդեօք թռչնոց կ'ըլլամ բաժին ,  
Ո՞ր դիակեր պորտաբոյծին :

Մըկըղուեցաւ մորթերս փափկիկ ,  
Կերան մարմնոյս մսեր կակղիկ .  
Լոկ ոսկորներըս թողուցին ,  
Որ սեւ հողին հետ խառնուին :

Ո՛վ Աստուած իմ , ո՞ւր եմ , ո՞ւր եմ .  
Ո՞ր եթերներ զիս կը ծածկեն .  
Որ բարձրաբերձ լերանց անտառ ,  
Ամիտիեն սիրտս յայս խոր խաւար :

Արդեօք սրածայր ժայռեր փուշեր ,  
Փափուկ մարմնոյս մէջն են խխեր .  
Քանի քանի խոցեր բացին ,  
Գեղեցկութիւնս տգեղեցին :

Ե՛րկինք , աչերս քեզի նային ,  
Գթան սրտէս ելած շունչին .  
Լոյս տուր տեսնել ո՞ր որջին մէջ ,  
Աքսորուած եմ , ո՞ր այրին մէջ :

Արդեօք քանի՞ խոժոռ գայլեր ,  
Պատրաստուած են իս փշրել .  
Կամ ո՞ր գազան կ'սպասէ դեռ ,  
Զետ հաւ դիշերը փարատել .  
Ըսէ՛ք ո՛ւր եմ ո՛ւր կը տանին :  
Ո՞ր ձորին մէջ կը դեգերիմ .  
Կամ քաղաքին ո՞ր դուռներէն ,  
Խեղճ ու կրակ դուրս քշուեր եմ :  
Ա՛ն անգութ բաղդ դեռ կը տանջես ,  
Մինչ երբ գետնէ գետին դարնես .  
Ո՛հ մի . թէ ո՛չ գայ ադրոպէն ,  
Առնէ հոգիս փրկիմ քեզմէն :  
Օ՛ն փութն ա՛ռ շունչըս սըրտէս ,  
Փրցուր խէ սիրտըս փորէս .  
Թէ ո՛չ , թող որ տեսնեմ լուսին ,  
Կրած ցաւիս դարման տանիմ :  
Լոկ իմ փափուկ սիրտս գտար ,  
Գիշերուան մէջ քեզ որս յարմար .  
Ագահ աչքիդ շատ երեւցաւ ,  
Ժուռ գալս լուսնի վառ դիմակաւ :

# Ն Ո Ւ Ա Ք

## ԵՐՐՈՐԴ

---

Ա՛յ իմ գողարիկ ազնիւ լուսնակ ,  
Շնորհէ՛ համբոյր մ' ինձ անուշակ .  
Պայծառ դիմօքըդ սիրաճեմ ,  
Ե՛լ խեղճ մարմնոյս կարօտն առնեմ :  
Աչացս դէմ տարած տարած ,  
Արծաթ թելէ մաղերդ հիւսուած .  
Սփռէ երկրիս դաշտերը սեւ ,  
Անշարժ կեցիք գլխուս վերեւ :  
Ըսէ՛ ժողովին խումբք աստեղաց ,  
Եւ չորս բոլորդ նազին շարուած ,  
Շող շող լուսով աչքով կլոր ,  
Պարեն դիմացս ոլոր ոլոր :  
Կրկին յաշխարհ ծնած ըլլամ ,  
Լուսովդ եթէ պայծառանամ .  
Թէ որ աչքէս տանիս խաւար ,  
Քեզ որդեգիր գրուիմ արդար .

Միթէ գարնան այս մէկ գիշեր

Մթին համար է որոշուեր .

Երկինք վրաս վրէժ ունէր ,

Որ խաւարեց ձեր սուրբ լոյսեր :

Ո՛վ գիշեր ո՛վ խոր լռութիւն ,

Ողջոյն բնութիւն հանգչի 'ի քուն .

Ո՛չ քաղաքէ ձայն կը լսուի ,

Եւ ո՛չ գիւղէ նշոյլ տեսուի :

Աղնիւ թռչներն անգամ գողտրիկ ,

Բնութեան ծոցը թառած լռիկ ,

Զեփիւռին դէմ քնով խաղաղ ,

Հանգչին իրենց ձագով մատաղ :

Ահա միայն ես եմ Աստուած ,

Բնութեան այս վեհ ձիրքէն զրկուած ,

Այս ժամին սոսկ իմ ձայնիկս է ,

Որ ողբալով քեզ աղերսէ :

Յոյս մը զոր դու Տէր Աստուած իմ ,

Շնորհեցիր մարդուս սրտին .

Ահա միայն այն սուրբ յուսով ,

Կ'ասարիմ մթին մէջ փակուելով :

Տուր հրամանս լուսնի արդար  
Ելլել ամպոց տակէն խաւար .  
Աւանդ է իմ սրտիս թշուառ ,  
Որ քեզ նուիրի Տէր բարերար :  
Երկինք 'ւ երկիր տարերք ամեն ,  
Սուրբ հրամանէդ սոսկ կախեալ են .  
Քեզմով պճնի պերճ բնութիւն ,  
Դու արարիչ ես ամենուն :  
Քեզմով փայլի սլայծառ արիին ,  
Ուրկէ վառի հեղիկ լուսին .  
Քեզմով նազին անշէջ աստղեր ,  
Մէկ խօսքով Դու աշխարհի Տէր :  
Դու ես Աստուած Արաքսիայի ,  
Մինչեւ այսօր Քեզմով ապրի .  
Քեզ կը սլաշտէ խեղճ Արաքսիա ,  
Քեզ կ'աղօթէ անդ հաս գլծա :  
Սուրբ օրինացըդ հակառակ ,  
Մինչեւ այսօր չըրի մեղանք .  
Այո՛ չը կայ մարդ մ' անսխալ ,  
Բայց զղջացած եմ Քեզ առ Հայր :

# Ն Ո Ւ Ա Վ

## ԶՈՐՐՈՐԴ

---

Ահա՛ լուսնակ դեղ թագուհի ,  
Ծլծլալով ինձ կ'երեւի .  
Լսե՛ց Աստուած ձայնիս տխուր ,  
Պարզեց ահա՛ տեսութիւնս կոյր :  
Փնռք բացուեցան աչերս մթին ,  
Փարատեցու մութն այն չնչին .  
Այնչափ աչքիս լոյսը խամրեր ,  
Որ չը զօրեմ տեսնել աստղեր :  
Երկու կողմս ալ ջուխտակ պատեր ,  
Դիմադէմ են ահա՛ կանգներ .  
Զորոշուին իսկ բերդի ձեւէն ,  
Գիտցայ հիմայ որ քաղաքն եմ :  
Մէկին շուքին տակն է որ ես ,  
Փռուած մնացեր եմ զոհի պէս .  
Ո՛հ չը կարեմ ոտքի ելնել ,  
Զը կայ մէկը զիս վեր առնել :

Վառեց լուսնակ դէմքը կլոր ,  
Գեղ թեւերով ճաճանչաւոր .  
Գրկեց ահա սիրտս խեղճուկ ,  
Փաթթեց մազեր մէջքիս փափուկ :

Այն ճիւնակոյտ ամպոց տակէն ,  
Թելուած գլուխը հարսնեղէն ,  
Յցուց որպէս թէ կը խալնի ,  
Լերանց ետեւը պահուրտի .

Գիտեմ լսես հեղիկ լուսնակ ,  
Մի ծածկեր գլուխդ , սրտին տարփանք .  
Լեզուս բերնիս մէջը չորցաւ ,  
Սիրտս 'ի փորիս տապկուեցաւ :

Իրաւ Դու ես եղեր միայն ,  
Սգազգած սրտին մխիթարանք .  
Դարձիր նայէ անգամ մը վար ,  
Ո՛ւր գլորուեր եմ չարաչար :

Գիտեմ գիտեմ բոլորովին ,  
Ալ բացուեցան բիբերս լոյսին .  
Լուսովդ նայիմ մէն մի չորս դիս ,  
Ինչեր պիտի երւան աչքիս :



# Ն Ո Ւ Ա Գ

## ՀԻՆԳԵՐՈՐԳ

---

Տէ՛ր իմ, ասոնք ո՞վ պիտ' ըլլան,  
Որ չորս բոլորս շարուած մնան .  
Գեռ չեմ կարող լաւ մ'որոշել,  
Յիշողութիւնս եմ կորուսեր :  
Հրեշտակի պէս փայլին պոյն գոյն,  
Աւետաբեր են գեղ լուսոյն .  
Այն ինչ անմահն աղուորութիւն,  
Քան գասանաց գեղեցկութիւն :  
Ասոնք արդեօք բերին լուսին,  
Խաւարն աչքէս հալածեցին .  
Եւ կամ ասոնք զիս 'ի գետին  
Արդ կիսամահ թողած կանգնին ,  
Երկնից գո՛ւթը հասուց ինձ ի ,  
Լսելով դառն ողբիս ճայնի .  
Եւ կամ ասոնց շողշող տեսքն է ,  
Որ աչքերս խախտեցնէ :

Ա՞ստղ լուսնի բոլոր շարուած ,  
Թէ լուսնի բակ կլոր դիրք մ'առած ,  
Արեգակ են , բայց չէ ցերեկ ,  
Որ կը շարժին իբր երթեւեկ :  
Այն ինչ մարգրիտ գեղոյն աչեր ,  
Ինչպէս ծիլ ծիլ պլպլան աստղեր -  
Ոսկի թելէ հիւսուած մազեր ,  
Ինչպէս արփուոյն ճառագայթներ :  
Դիմաց պատկեր վարդ նուռ ու հուր ,  
Վառեն սիրով սրտեր տխուր .  
Քաղցրաժպիտ այտեր կարմիր ,  
Ջեւ ծերանի գօտւոյն գեղ ծիր :  
Ուսերն իբրու հրեշտակաց թեւ ,  
Պահպանեն զիւ անոնց ներքեւ .  
Կարծես երկնից անշէջ աստղեր ,  
Գլուխնին թագով են պսակեր :  
Չըկայ նման բոլոր աշխարհ ,  
Ասոնց տեսքին ճիշտ հաւասար .  
Կարծես արփուոյն օրն են ծներ  
Եւ հեղ լուսնի հետ պսակուեր :

Արեւերեան հայոց Արայ ,  
Եւ գեղեցիկն Յովսէփ տղայ ,  
Հաղիւ կրնան 'ի կշիռ գալ ,  
Գեղեցկութեանն ասոնց պայծառ :  
Ինչպէս շուշան բուրաստանի ,  
Դաշտն ու հովիտ լեռներ բուրի .  
Եւ երասխայ ասիանց վարդեր ,  
Այնպէս բուրին այս հրեշտակներ :  
Լոկ քաղցրաձայն քնար պակաս ,  
Որ սկսին պարել դաս դաս .  
Ինչպէս Մուսայք , Զուարթնոց պար ,  
Եւ օրիորդք հայոց հազար :  
Մեղոյշ շրթունք սիրոյ բերան ,  
Վայելչութիւնք բնութեան լման .  
Մէն մ'որ նազին լոյս ծագէ յիս ,  
Եւ մեղմանան ցաւեր սրախ :  
Հիմայ ինչպէս ցաւս չը մոռնամ ,  
Երբ լուսոյն այս արդիւնք տեսնամ .  
Լուսոյ սէրըս այնչափ սաստիկ ,  
Որ կակիծիս չընեմ մտիկ :

Մութէն յանկարծ լոյս մտնելուս ,  
 Տկարացեր աչացըս լոյս ,  
 Բայց արդ ինչո՞ւ գլուխնին ծռած ,  
 Չեռն 'ի ծնօտ կանգնին 'ի լաց :  
 Ա՛ստուած ո՞ր քան տեսքերու ձեւ ,  
 Կը պատկերին աչացս առջեւ .  
 Երանդ թէ ցնոր , ինչ են ո՛՞՞՛՛ Տէր ,  
 Քնոյ մէջ եմ թէ արթնցեր :  
 Միթէ դառն ողբերս լսած ,  
 Գան ողբակցիլ , նստիլ 'ի լաց .  
 Կամ ինչ վիճակ է զիս պատեր ,  
 Որ դիտելով կուլան կոյսեր :  
 Ասողի նման աչաց մէջէն ,  
 Վարդի կոկոն երեւներէն  
 Ողողած դառն լացի ցօղեր ,  
 Ի գութ շարժեն մի՞նչ քար սրտեր :  
 Մէկ ձեռքերնին ալ յիս ուղղած ,  
 Նային խեղճ խեղճ , ո՞րչափ ապշած .  
 Ալ չեմ կրնար հոս համբերել ,  
 Ո՛վ ըլլալնին դառնամ հարցնել :

# Ն Ո Ւ Ա Ք

## Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

---

Ո՛վ դուք, որ սեւ ցաւոցս ատեն,  
Կ'երւաք աղօտ աչքերուս դէմ.  
Ինչպէս այգուն արեւ պայծառ,  
Կը հալածէ զչար խաւար:  
Մխիթար էք տխուր սրտիս,  
Աստուած խաւրեց զձեզ յերկնից.  
Հըրեշտակներ էք երկնային,  
Թէ լուսատու պայծառ լուսնին:  
Արտասուագին աչքիս ցօղեր,  
Որ կը փշրեն մինչեւ ժայռեր.  
Չայնս երկինք անգամ հասաւ,  
Օգնել եկաք տեսած իմ ցաւ:  
Հաւտամ աչացս, բերնիս խօսքին,  
Ի՞նչ տեսք ունիք, խիտ սիրագին.  
Սերօբէններ էք հըրեղէն,  
Առած մարդու կերպ մը վսեմ:

կարծես դիմացս լուռ մունչ կեցած ,  
Եւ շրթունքնիդ ինծի ուղղած ,  
Իմ հետ խօսիք , բայց չեմ լսեր ,  
Ձեռն 'ի ծնօտ այն ինչ ողբեր :  
Յերկնից ուզածս օգնութիւն էր ,  
Եւ ո՛չ ցաւոցս ողբակիցներ .  
Երկնից աղերսս լոկ լուսին էր ,  
Բայց միթէ դ՞ո՞ւք էք լուսաբեր :  
Եթէ օգնել եկաք ինծի ,  
Ինչո՞ւ կուլաք , տեսք հրաշալի .  
Քանի լացիս կ'ուզեմ վերջ տալ ,  
Ձեզ տեսնելուս ողբամ հազար :  
Ինչպէս որ սեւ դագաղ մահուան ,  
Վաղամեռիկ որդւոյ վրան .  
Բոլորն ժողված հայր մայր 'ւ եղբայր ,  
Ողբեր կ'ընեն քորք դառնահար :  
Այնպէս եւ դուք չորս կողմս կանդնած ,  
Այդ ինչ լաց է կ'ընէք . Աստուած .  
Որդիք լուսոյ արդ պաղատիմ ,  
Որ ալ ձեզի ծանօթ լինիմ :

Ն Ո Ւ Ա Գ

ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ա՛հ քոյր ցաւոց կոյս վշտահար .  
Դեռ նոր տեսար քոյրերդ թշուառ .  
Յիշէ՛ յիշէ՛ քիչ մ'առաջուան ,  
Քեզ հետ չըջող ընկերք որ լան .  
Դեռ ո՛հ խելքդ 'ի գլուխ չեկաւ ,  
Ե՛լ Արաքսիա ե՛լ լացըդ բաւ .  
Հերիք լուսին ու աստղեր կոչես ,  
Լուսին պանծայ դու չը տեսնես :  
Ե՛լ ե՛լ ոտքի քոյր մեր չքնաղ ,  
Ե՛լ որ դքեզ ծածկեց աւաղ .  
Ե՛կ սրբենք այն դառն ու աղի ջուր ,  
Որ կը վազէ աչքէդ բուռ բուռ :  
Ե՛լ գիրկընդխառն սրբենք աչերդ ,  
Որ ճանչնաս քու սիրուն քոյրերդ .  
Ալ չմնաց սիրտ դիմացող ,  
Մինչ տեսնեն վէրքըդ սրտադող :

Լսողութիւնդ խիստ ծանրացեր ,  
Ժամ մ'է գոչենք ե՛լ , չես լսեր .  
Լուսին կանգնած միշտ դիտէ քեզ ,  
Դու միշտ լուսնի լոյս տալ գոչես :  
Միայն դէմքիդ առած վէրքն է ,  
Որ քեզ այսպէս միշտ կ'ողբացնէ .  
Փայլուն ճակատէդ բղխած արիւն ,  
Լեցուած աչերդ գոցեց խակոյն :  
Քանի անգամ թեւերդ մտած ,  
Քեզ չոր գետնէն վեր վերցուցած ,  
Աշխատեցանք տանիլ 'ի տուն ,  
Հառաչեցիր չմերձիլ խակոյն :  
Ի՞նչ մեծ երկիւղ էր մեզ պատեց ,  
Երբ գլորեցար ժայռի մը պէս .  
Չըլսեցիր մեր ձայներուն ,  
Մինչեւ եկաւ գլխուդ այս ձիւն :  
Ե՛լ քոյր դժբաղդ ելիր երթանք ,  
Սրբենք վէրքերդ ու դարման տանք ,  
Այնչափ դուն քեզ ես կորուսած ,  
Որ անոնց ցաւն անգամ չզգաս .



# Ն Ո Ւ Ա Գ

## ՈՒԹԵՐՈՐԴ

---

Աստուած իմ, առ ինչ է լսեմ,  
Ասոնք իմին ընկերներս են .  
Ես կարծեցի չար ոգիներ ,  
Ցարդ աշխատին շունչս կտրել ,  
Ունիմ եղեր փառք պահպանող ,  
Ո՛հ կայ եղեր ճայնիս լսող .  
Բայց իմ ականջս է ծանրացեր ,  
Լացի աչքերս արեամբ դոցուեր :  
Տէ՛ր . ինչ վէրք է . ո՛հ կերազեմ .  
Ա. յն ինչ վէրքի անուն լսեմ .  
Որ սկսեց մեծ կսկիծ տալ ,  
Ահա՛ զգամ ցաւ մը . թշուառ :  
Ո՛հ այն ինչ է գետնի վրան ,  
Կարմրուկ բաներ աչացս երևան .  
Արեան կաթիլ , վարդ , մատղ են Տէ՛ր ,  
Գեռ չեմ կարող լաւ մ'որոշել :

Երկինք փռուած աստղի նման ,  
Գետնի վրայ թափած մնան .  
Եւ կամ կարմիր վարդի թերթեր ,  
Դաշտին վրայ հովն է փռեր :  
Ինչպէս չքնաղն ամսոց մայիս ,  
Ծլած ծաղկած երեան երկրիս ,  
Զարդարուած նոր հարսերու պէս ,  
Ծածկէ գետին ծաղկով պէս պէս :  
Այսպէս ահա քարոտ գետին ,  
Ծածկուէր գունով մ'անուշագին .  
Եւ կարծես թէ ամեն վայրկեան ,  
Կը տարածուին կը բարձրանան :  
Ո՛չ ո՛չ արեան կաթիլներ են ,  
Որ զիս ցանգի պէս կը պատեն .  
Եւ ճիշդ ակնէն կը վաղէ կոր ,  
Ի՞նչ նուրբ արիւն խիստ գունաւոր :  
Քոյրեր աս ինչ ծով մը արեան ,  
Ուր ընկղմած է Արաքսիան .  
Ո՞ր մեծ սրտէ կը վազէ Տէ՛ր ,  
Կ'երթան կուգան մեծ հեղեղներ :

Անգամ մ'անշարժ ձեռքերս թուլցած ,  
Քսեմ գլխէս մինչ ոտք տարած .

Անշուշտ խեղճիս վրայէն է ,

Որ միայն իմ տեղս կը պատէ :

Աստուած որչափ եմ աղճատեր ,

Արիւնս վազէ ես չեմ տեսներ .

Միթէ անգութ թշնամիներ ,

Դէմքիս նետեր են արձըկեր :

Արդեօք ինչպէս այս դէպքն անյոյս ,

Ջարնուեր է փափուկ գլխոյս .

Չեմ կրնար դէթ միտքս բերել ,

Ո՞ր ցուրտ բերնէն այս հով փչեր :

Ի՞նչ ողողմունք դառըն արեան ,

Իբրու կարմիր ծով ծփական .

Ո՞հ այս ժամն ալ պի' տեսնէի ,

Ես աս ցանն ալ պի' քաշէի :

Ահա անմեղ գառան մը պէս ,

Ջոհուած գլորիմ վարդ արեանս մէջ .

Ջրվէժի պէս վիժի արիւն ,

Ողողելով մարմինս ողջոյն :

կարմրագունակ արեանս գետեր ,  
Իբր ուչ մնացած լցնեն լիճեր .  
Եւ որ մէկ ճիւղն ոստոստելով ,  
Տխուր տեսքով թափի 'ի ծով :  
Անն չքնաղ երես լուսնի ,  
Որ օգնութեան կը կանչէի ,  
Աստղերուն հետ նուրբ արեանս մէջ ,  
Լողայ խայտայ միշտ յել եւ էջ :  
Այն ինչ սիրուն գոհար աչեր ,  
Զետ բոցավառ սիրոյ ճրագներ .  
Կարծես գիմացս գեղեցկութիւն ,  
Յափշտակեր լուսին սիրուն :  
Արաքսիան հոս է , ով Աստուած ,  
Երեսն արեան մէջ թափանձած ,  
Երկու աչքէն թափին գետեր ,  
Սեւ արեանը հետ խառնուել :  
Ամեն կաթիլ մինչ գայ 'ի գիլ ,  
Սիրոս ծածկէ հրոյ մոխիր .  
Մինչ կաթկթէ նռան կայլակ ,  
Զիս խորտակէ կարծես կայծակ :

Ինչպէս հրաբուռիս լերանց բերնէն  
Վազած կրակ , գիւղերն ամեն  
Խորտակելով դաշտ դարձնէ :

Բոցն ալ մ'ինչեւ երկինք ելլէ :

Ինչպէս Սողոմ Գոմոր քաղքներ ,  
Երկնից պատժոյ հրոյ հեղեղներ ,  
Ջրհեղեղի պէս պարպուած ,

Այրեցին դայն մոխրով ծածկած :

Չը լըսելով ողբոց հազար ,

Կոյս եւ տղայ մանկունք արդար ,

Հառաչանքով խորովեցան

Այնպէս եւ Տէ'ր , խեղճ Արաքսիան :

Ինչպէս աշիք Ովկիանեան ,

Հիւսիսային հողմոց բերան

Կը բարձրանան մինչեւ լեռներ ,

Ընկղմելով հազար նաւեր :

Իբրեւ թէ ոխ մ'ունին անոնց ,

Եւ մինչ չըտան վէրքերու խոց ,

Չար կիրքերնին չը հանդարտիր ,

Մինչ չը հասնին եզերաց ծիր :

Այնպէս եւ Տէ՛ր , խեղճ Արաքսիան ,  
Ընկած դժխեմ բաղդին բերան ,  
Իւր արիւնը գի՛նք պի՛ խղղէ ,  
Մի՛թ՛ Արաքսիան անձնասպան մ'է :  
Զնջուէր մարմինս ողորմելի ,  
Արեան պեաց մէջ կը ծփի .  
Կարծես խոժոռ խոր անդունդներ  
Արդ կ'սպառնան փռւթով կլլել :  
Ինչպէս քաղաք մ'անդօր անդէն ,  
Պաշարուած դռ թշնամիէն ,  
Շատ ծեծերէ վերջն առաթուր ,  
Յաւօք կ'ըլլայ դառն անձնատուր :  
Ահն այնպէս խեղճ Արաքսիան ,  
Չար բաղդին դէմ անօգնական ,  
Անձնատուր ալ եղաւ թէեւ ,  
Բայց միշտ հարուած գլխուն վերեւ :  
Չեմ կրնար գէթ ոտքի ելլել .  
Ինչպէս որ հին աւուրց ծերեր ,  
Մօտենալով մահուան շիրմին ,  
Չուզեն նստած տեղէն շարժին :



# Ն Ո Ւ Ա Գ

## ԻՆՆԵՐՈՐԴ

---

Եւ արդ գիտեմ որ բաւական ,  
Խելքս 'ի գլուխ ժողուած ըլլամ .  
Ուստի մէյմը չորս դիւ դարձած ,  
Տեսնեմ ինչպէս հոս եմ ընկած :  
Կեցած տեղս խիտ դառ 'ի վայր ,  
Անցուկ ճամբայ սըրսկուած քար ,  
Երկու կողմը բարձր պատեր ,  
Կարծես պատժոյ բանան եմ դրուեր :  
Անշուշտ ես սա դառիվայրէն ,  
Վազելով հոս գըլորեր եմ .  
Եւ տապալած , ինչպէս որ վէմ ,  
Սուր քարերուն մատնուած եմ :  
Այն ինչ անթիւ փշրած քարեր ,  
Ածելուոյ պէս գեախն փռուեր .  
Եւ տեղ տեղ ալ ժայռիկ բուսած ,  
Նեղ ճամբան լեռն են դարձուցած :

Անշուշտ սա քայրը սրածայր ,  
Ծակեր երակն արեանըս վառ ,  
Որուն վրայ ահա չորցած ,  
Մնայ դէզ դէզ խիստ թանձրացած :  
Տեսնէ՛ր երկինք արիւնս արդար ,  
Փչրէ՛ր զայս քար կայծակնահար .  
Թուլցեր բազկացս կտրճութիւն ,  
Որ հրացանի բռնեմ իսկոյն :  
Հազար եղնկ խեղճ Արաքսիաս ,  
Մանկութեան սիրտդ է ծերացած .  
Եթէ դպչին մէկ մատիկով ,  
Գետինն իյնաս գըլորելով :  
Ո՛վ Աստուած իմ սոսկ խեղճս էի ,  
Այս հարուածին Էս արժանի ,  
Ամեն վայրկեան վէրքերուս ցաւ .  
Բազմապատկի կսկծով անբաւ :  
Յերեկ ալ չէ դժբաղդապէս ,  
Որ վիրաբոյժ մը գէթ ճարես ,  
Ասկէց ալ մեծ թշուառութիւն ,  
Կ՛ըլլայ եղեր գիշերն 'ի բուն :



Յրակներս մինչ շարունակ

Արիւն թափեն կայլակ կայլակ,  
Զգայութիւնս հարկաւ դադրած,  
Կ'իջնեմ 'ի հող շունջս սպառած:

Գոնէ տանս մէջն ալ չեմ Տէ'ր,

Որ վէրքերուս պլլեմ լաթեր:

Հեռի աւաղ քարուտ գետին,

Կ'ողբամ արեանս մէջ տիրազին:

Ինչպէս թռչնոց նորածին ձագ,

Կորուսած մայրը կաթողին:

Թուփէ 'ի խուփ լեռնէ 'ի լեռ,

Կը ճլվլայ ողբով վար վեր:

Վերջապէս մէկ ցորնի հատին

Կարօտ մնացած, ինկած գետին,

Մեռնի հեռու մօրկան գրկէն,

Զարժանացած սիրոյն վսեմ:

Արաքսիայի ձայնն ալ այսպէս,

Զը լսէ մայրն կարօտակէզ:

Բայց ինչ սուգի մէջ կը մտնէր,

Եթէ դաւակն յայս ցաւ տեսնէր:

# Ն Ո Ւ Ա Ք

## ՏԱՍՆԵՐՈՐԴ.

---

Ո՛վ գեղ քոյրերս ապերժանիկ ,  
Որ խեղճ գլխուս վերեւ կանգնիք -  
Արիւնն խմին սրտէս փղձկէ ,  
Արցունքը ձեր աչքէն վաղէ :  
Տունէ հեռի հերիք ողբաք ,  
Այս սեւաշուք պատերուն տակ -  
Տեսնելով դառն արեանս փռոց ,  
Տեսնելով ձեր ընկերին խոց :  
Եկէ՛ք ազնիւ իմ հրեշտակներ ,  
Արաքսիայի թեւեր մանեկ .  
Հերիք բաղդէս ըլլամ նկուռն ,  
Երթանք սէր իմ երթանք 'ի տուն -  
Հերիք այս չոր քարին դիմաց ,  
Վաղէ արիւնս 'ւ աչացս լաց .  
Քանի տեսնեմ չար թշնամիս ,  
Կաթուած իջնէ անմեղ սրտիս :

Երբ Լէնկթիմուր աշխարհակալ,  
Պատերազմէն ետ կը դառնար,  
Յուսահատած տխուր սրտով,  
Տաղաւարին տակ քաշուելով  
Մինչ կ'սկսի ցաւօք խորհիլ,  
Իրեն դժբաղդ ճակատագիրը,  
Այն ոսկեթէլ տաղաւարին,  
Վրայ քալէր մըջիւն չնչին:  
Ուժեղ ձեռքերն վեր վերցուցած,  
Կը հրէ դայն գետին ձգած.  
Մըջիւնը վար կը դրոբի,  
Լէնկթիմուր քիչ մը շփոթի:  
Հետաքրքիր աշխարհակալ,  
Ութսուն անգամ հրած դայն վար,  
Թեւը հողնի, մըջիւնին մէկ  
Չկարէ յաղթել քաջ երթեւեկ:  
Նոյնպէս ճանճիկ բղբզալով,  
Սէգ առիւծին մօտենալով  
Քիթն ու ականջը կը մտնէ,  
Չայն մեծ դուռը կը յաղթէ:

Ուրեմն ի՞նչպէս խեղճ Արաքսիա  
Մեծցած փափուկ ձեռաց վրա ,  
Կրնայ չնչին քարին յաղթել ,  
Եւ իւր վրէժն անկէց առնել :  
Օ՛ն հեռանամ ասոր քովէն ,  
Վերուցէ՛ք զիս քոյրեր վսեմ .  
Չարժեմ անգամ մ'ալ հոս կոխել ,  
Ուր կը վազէ արեանս գետեր :  
Ի՞նչպէս չեղաւ որ ազատէք  
Այս վտանգէն՝ զոր կը տեսնէք .  
Ի՞նչ կայ տկար ճնճղուկներէն ,  
Միժեռնիկէն ո՞վ կայ անդէն .  
Երբ գիշակեր ագահ թռչներ  
Կուգան զիրենք յափշտակել ,  
Ամբողջ ազգի պէս ժողովուած ,  
Կը հալածեն միաբանած :  
Այն որ բաժնի իւր ընկերէն ,  
Կ'ընկնի բաղդին ձեռքը դժխեմ .  
Ամեն քայլին երկիւղ կ'երւայ ,  
Մինչ անկողնոյն բարձին վրայ :

Երբոր մէկ մարդ մը մինակ է ,  
 Բռնութեան հով զանի ընկճէ .  
 Տիրոջը քով գերի կ'ըլլայ ,  
 Տէրութեան մէջ լռիկ ծառայ :  
 Տունկ մ'երբ մինակ կը տնկուի ,  
 Տաք արեւին բոցէն այրի .  
 Երբոր ծառ մը բաց տեղ բուսնի ,  
 Տերեւաթափ կը վնասուի :  
 Փոխանակ վեր բարձրանալու ,  
 Եւ գեղ ճիւղեր արձրկելու ,  
 Միշտ դէպ 'ի հող կը խոնարհի ,  
 Զեա զառամեալ ծերեր գօսի :  
 Այսպէս եղաւ սիրելիքդ իմ ,  
 Արժան չեղանց ձեր մէկ թեւին .  
 Որ վազելու ատենս բռնած ,  
 Դադրեցընէր քայլերս չորցած :  
 Արդ չը տեսնե՛մ այս սեւ պատեր ,  
 Որ բանտի պէս վրաս գոցուէր .  
 Լսէ՛ր երկինք ձայնիս տխուր ,  
 Այս անիծեալ տեղ թափէր հուր :

Գիտեմ որ իմ սուրբ Աստուածս էր ,

Մոխիր դարձուց երկու քաղքներ ,

Հիմերն 'ի վեր տապալելով ,

Ալիւրի պէս մաղեց մաղով ,

Փշէր հով մը խիտ սառնասէր ,

Այս քարն ինչուան ծովեր քշէր .

Տանէր արիւնս եղերք թափած ,

Յանձնէր ծփող 'ւ անշարժ ալեաց :

Շարժէր երկիր մանաւանդ հոս ,

Բացուէր անդունդ ու խորին փոս .

Կործանէր այս երկու պատեր ,

Արեանս ծովին մէջ լեցնել :

Ստոյգ չիցտեմ ցարդ ո՛վ իմ Տէր ,

Ճիշտ որ կողմս է վիրաւորուեր :

Մինչ հիմակուան խօսքերս անգամ ,

Երազի պէս ինձի կուզան :

Ո՛հ նաստանձ եմ թէ տուն կ'երթամ ,

Այս իրիկուն գէթ հոս չմնամ .

Բացէ՛ք դռնակս ալ մտնենք ներս ,

Դեռ չը մարած շունչս սրտէս :

# Ն Ո Ւ Ա Ք

## ՏԱՄՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ

Քոյրեր բոլոր մարմնոյս վրայ ,  
Վէրքի նշոյլ մ'անգամ չը կայ ,  
Բայց միշտ արիւնը կը վազէ ,  
Ըսել է թէ գլուխէս է :  
Բերէ՛ք ուրեմն պայծառ հայլիս ,  
Նայիմ անգամ մը խեղճ դէմքիս .  
Բերէ՛ք բերէ՛ք , խեղճ Արաքսիա  
Երեսներուն սրտիկեր տեսնայ :  
Արդեօք քանի՞ տեղ խոցոտեր ,  
Գեղեցկութիւնս ամեն փոխուեր .  
Դէմքի ձեւ ալ միթէ մնացեր ,  
Այս ի՞նչ ցաւ է կը քաշեմ Տէ՛ր :  
Տեսնեմ արեանս աղբիւրն ո՞ւր է ,  
Անշուշտ սգոյ երեսէս է .  
Ուրկէց ահա ողողելով ,  
Ներկէ մարմինս դառն դունով :

Բայց քիչ մը ջրով լուամ ձեռքերս ,  
Արբեմ արեամբ թաթխած աչերս .  
Որ կարենամ լաւ մը տեսնել ,  
Սեւ վէրքերուս խորը դիտել :  
Տուէ՛ք քոյրեր , տուէ՛ք հայլին ,  
Կասկածանքէս նհ ազատիմ .  
Բայց բե՛ր աչք մ'ու սիրտ դիմացող ,  
Նայիլ , չկրած մէկ սրտադող ,  
Տուր համարձակ սիրտ , Տէ՛ր , խեղճիս ,  
Անվեհեր տեսք ողբոց աչքիս .  
Տեսնել հայլոյ մէջ Արաքսիան ,  
Վերջ տալ լացին եւ դառն արեան :  
Ո՛վ Աստուած իմ ինչ կը տեսնեմ ,  
Արաքսիայի դէմքը վսեմ .  
Բնաւ երբէք իմս չէ այս ,  
Քանի քանի վէրքով պատած :  
Չինուոր մ'է սա վեհ հայրենեաց ,  
Պատերազմի դաշտէն դարձած .  
Եւ ահա սեւ սեւ գնտակներ ,  
Երկու այտից մէջն են թաղուեր :



Այն ինչ անթիւ աղբերք արեանց ,  
Արդեօք գայլերն են փողոտած .  
Որոնց ամեն խածած տեղեր ,  
Սեւ վէրքերու անդունդ բացուեր :  
Մարեր այտից փայլունութիւն ,  
Ինչպէս թմրած վարդ մը դժգոյն .  
Սաստիկ կարկուտ թափածի պէս ,  
Ծակծկեր է , ս՛հ քաղցր երես :  
Ինչպէս լերանց բարձր ժայռեր ,  
Կայծակի դէմ փշրած վար վեր ,  
Բոլոր մարմինը սեւ պատած ,  
Կ'աւրի առջի դիրքն ամրացած :  
Այնպէս ծառներ , կենդանիներ ,  
Պանդուխտ հովիւն ու ճամբորդներ ,  
Յանկարծահաս կայծակներէն ,  
Կը կործանին յերկիր նսեմ :  
Ահագին ծառն իբրեւ թագւոր ,  
Գետնի վրայ պառկած անզօր ,  
Կ'արժանանայ՝ անպտղատու ,  
Անկէց ետեւ լոկ վառելու :

Կենդանիներ խոտան 'ի բերան ,  
Մինչ ճարակին մարդաց վրան ,  
Սեւ զոհի պէս կ'իյնան գետին ,  
Ազահ թռնոց ճաշակ մ'անգին :  
Հովիւն 'ի լեռն իւր հօտին քով ,  
Մինչ կ'աշխատի ժողվել փութով ,  
Կ'իջնէ վերէն անեղաբար ,  
Կը բաժնէ զան հօտէն արդար :  
Ճամբորդն ուսը տոպրակն առեր ,  
Հագած բնութեան հողաթավներ ,  
Մինչ կ'ամիտիուի ծառի մը տակ ,  
Կը ջնջէ զայն անգութ կայծակ :  
Ահա այնպէս խեղճ Արաքսիաս ,  
Երկու պատին տակը փռուած ,  
Ինկէր յանկարծ կայծակնահար ,  
Վիրաւորէր իր գէմքն արդար :  
Աւանդ քեզի կոյս ցաւալի ,  
Քու երեսդ է գիտցիր ասի .  
Արաքսիան է որ արդ կ'ըսէ ,  
Վնիս խղճալի քու երեսդ է :

Ո՞ւր այն ճակատս որ երկնից դէմ  
Փայլէր, ինչպէս արփին վսեմ .  
Արդ խաւարէր սեւ վէրքերով,  
Թաթխուած դառն արեան գետով :  
Ո՞ւր այն փայլուն աչքերս գոհար ,  
Որ աստղի պէս ծիլ ծիլ շողար  
Պայծառ լուսնի դէմքին դիմաց ,  
Հիմայ արեան ծով է դարձած :  
Ո՞ւր երկթերթի շրթներս փափուկ ,  
Ուրկէց ցոլար սիրոյ հեղուկ  
Առ Աստուածն իմ, 'ւ առ հայրենիս .  
Արդ չը շարժին, վնայ իմ բերնիս :  
Մարդարտաշար ակռաներս ձիւն ,  
Փայլէին իբր աստեղատուն .  
Ալիւրի պէս ահա փշրած ,  
Բերնիս փոսին մէջն է լեցուած :  
Ծխէ սրտէս բոց դառն արեան ,  
Ողբոց՝ կոկորդս է ծխարան .  
Բոլոր կաշիս է սկրդուեր ,  
Կարծես ոչխար մ'են փողոտեր :

Արեւանման կլոր գլխէս  
կախուած մազերս շառաւղի պէս ,  
Արմատախիլ եմ փրցուցեր ,  
Թեկ մը անգամ չէ մնացեր :  
Ո՞ւր է Աստուած դիւցազնուհւոյս ,  
Այն վառվռուն այտերու լոյս .  
Ո՞ւր երեսին ժպիտ չքնաղ ,  
Ո՞ւր հայեցուածքս հեզ ու խաղաղ :  
Կարծես վզիս տակէն կտրած ,  
Խոցոտ գլուխ մըն են դրած .  
Խաւար ժամուս հետը սեւցեր ,  
Անմեղ դառի պէս փողոտուէր :  
Ալ յոյս չըկայ ինձ ապրելու ,  
Եւ կեանքիս զե'կը ուղղելու .  
Ծնունդս եղաւ ս'ն սեւ հողէն ,  
Կրկին 'ի հող շուտով մանեմ :  
Այս այլանդակ դէմքիս վիրաց  
Կըլլայ միթէ դարման , Ա'ստուած ,  
Արաքսիայի դէմքն է այս , Տէ'ր ,  
Ուր վէրքի թուփ մ'է անկուեր :

Վերցնեմ հայլին զարնեմ գետին ,  
Դեռ ինչ ձեռքս բռնած նայիմ :

Տկար ոտքիս տակը առած ,  
Փշրեմ ինչպէս ալիւր մաղած :

Զորնար լեզուս 'ի մէջ բերնիս ,  
Երբոր ըսի իմ ընկերիս ,

Բերէք մէյմը պայծառ հայլիս ,  
Նայիմ արեամբ թաթխած դէմքիս :

Քաշուէր ձեռքերս ան վայրկենին ,  
Որ համարձակ բռնած հայլին ,

Հրաբուղխի պէս տեսայ արիւն  
Վաղէր , ինչպէս խարոյկ հրոյն :

Աւաղ քեզի ո՛վ Հայ կուտան ,  
Եղնկ դիմացըդ աննման .

Որ դո՛հ եղաւ չնչին քարին ,  
Կոծած խոցած սրտիկդ անդին :

Քեղածիծաղ երեսդ պայծառ ,  
Մինչդեռ եղաւ խոցի անտառ ,

Աւ մի դաղբիր ողբն հաղար ,  
Լաց արտասուէ՛ բաղդդ թշուառ :

# Ն Ո Ւ Ա Գ

## ՏՍՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ.

Ո՛վ լեզու, որ թեւատարած  
 Տխուր ձայնիկդ յաշխարհ ձգած,  
 Լուսին 'ւ աստղեր քեզ գոչէիր,  
 Ըսէ՛ արդ դան թուխ ամպոց ծիր:

Ո՛վ սեւերես ամպեր խաւար,  
 Ելէ՛ք, երկնից երեսն հաւասար  
 Ծածկեցէք մութ փռոցներով,  
 Եւ թանձրամած դէզ դէզ կոյտով:  
 Ինչպէս դառն հովին բերան,  
 Խոժոռ ալիք Ովկիանեան  
 Լեռներու չափ բարձրանալով,  
 Կ'իջնեն հաւեր կործանելով.

Եկայք եւ դուք ամպք տխրազին,  
 Խաւարեցէ՛ք դասող ու լուսին.  
 Ծածկէ զիս սեւ մահուան դիշեր,  
 Զտեսնեմ լուսնի 'ւ աստղի պատկեր:

Աղնիւ լուսին , աստղե՛ր պայծառ ,  
Չարժեմ տեսնել ձեր լոյսն արդար .  
Պահուըտեցէ՛ք թուխ ամպոց տակ ,  
Գոցէ՛ ձեր դէմք սգոյ դիմակ ,  
Բացուէ՛ երկիր ազահ դետին ,  
Բացէ՛ք մահուանըս սեւ շիրիմ .  
Թաղեցէ՛ք դիս մոխրով հողով ,  
Յ'ն թող գոցուին աչերս շուտով :  
Չըսուի երբէ՛ք թէ Արաքսիա ,  
Շունչ կ'առնէ դեռ երկրի վրայ .  
Չարժեմ տեսնել եւ ոչ մէկ բան ,  
Այլ միայն իմ սեւ դերեղման :  
Լաց Արաքսիա թշուառ աղջիկ ,  
Լաց բաղդդ կոյր լաց կոյս փափկիկ .  
Երակներդ արդէն պարպուած ,  
Վազէ բուռ բուռ արցունքն աչաց :  
Լաց քո դժպիհ ճակատադիր ,  
Որ սիրտդ ըրաւ հող ու մոխիր .  
Լաց որ հայկեան կոյս մը անդին ,  
Ո՛հ զոհ եղաւ ջնջին քարին :

Լացէ՛ք աչեր իմ ցօղազին ,  
Լացէ՛ք զանկումն Արաքսիային .  
Արտասուեցէ՛ք կուսանք Հայոց  
Քոյր ձեր զոր արդ ծածկէ սեւ խոց :  
Արտասուացըդ սուրբ կաթիլներ ,  
Բերէ՛ք արեանըս հետ խառնել .  
Եւ զետ ձմրան ձեան կայլակներ ,  
Երած օրտիս վրայ ցօղել :  
Ես ալ ձեզ պէս զեզ կոյս մ'էի ,  
Գեղեցկութիւնս իմ կորուսի .  
Մինչեւ չնչին քար մը անդամ ,  
Նախանձեցաւ դէմքիս վրան :  
Խմեց կարմրուկ վարդ արիւններս ,  
Պարպեց քամեց ողջ երակներս .  
Հոգիս բերանըս հասուցած ,  
Տապալեց զիս դետին թողած :  
Լացէ՛ք աչեր դուք ցօղազին ,  
Լացէ՛ք զանկումըն հայկուսին .  
Արտասուեցէ՛ք կուսանք Հայոց ,  
Արաքսիայի դիմաց սեւ խոց :



Ողբան երկին լաց դու երկիր ,  
Պանդուխտ սիրտս ու ողխ անժիր .  
Անդուժ բաղդին հովեր փչած ,  
Խաղաղ կեանքս թողին ցրուած :  
Թշուառութիւն մնաց ժառանգ ,  
Ուրկէ չունիմ կարծես փրկանք .  
Նեղուցներէ դուրս աքսորուած ,  
Իբր Ովկիան ծովն եմ ընկած :  
Վանի եղկելի դիւցազնուհւոյս ,  
Հալի մաշի կեանքըս եւ յոյս .  
Դեռ շատ արեւ սլի՛ ծագէր յիս ,  
Դեռ շատ բաղդեր պատրաստ էր ինձ :  
Խաւարեցաւ իմ վէհ արեւ ,  
Տամ աշխարհի վերջին բարեւ .  
Կարծես մահուան ինձ գոյժ կարգան ,  
Եւ սեւ դադադս առած կուգան :  
Ո՛վ եղկելուոյս , ողորմ անձիս ,  
Վիճակ կծուին , ո՛վ աղետիս ,  
Այս ինչ դառըն հարուած ո՛ Տէր ,  
Ի՞նչ գէպք անյոյս , ո՛վ խոր գիշեր :

Ինչպէս դժուարին ու ծանր աղէտ ,  
Յաւէտ սրտիս ցաւ դառնաղէտ ,  
Շուտ աւելցան , ժամ ժամ շատցան  
Կակիժ վէրքիս յանկարծական :

Ալ չեն բուժիր խոցերդ դէմքիս ,  
Ալ չեն դադրիր արցունք աչքիս ,  
Երբ մտածեմ անցեալ , ներկան ,  
Որ իմ գլխովս եկան անցան :

Ճմլի աղիքս ինչ ցաւ չզգամ ,  
Երբ յիշեմ դէմքս արեւանման .  
Ժայռոտ լերանց ապառաժներ ,  
Հառաչանքիս չկարեն ժուժել :

Քայց բաղդիս սիրտ խիստ քարացել ,  
Ողբիս բնաւ մտիկ չըներ .  
Ինչ դառն հարուած որ կրեր եմ ,  
Իրեն անխիղճ երեսէն են :

Ժամ է որ լամ արտասուաղին ,  
Ջի միշտ արկածք ինձ չը պակսիր .  
Միթէ ծնաւ մայրս միայն  
Թշուառութեանց անկիւն մնամ :

Մտակ վտանգի համար ծնայ .

Եղևկ սրտիդ խեղճ Արաքսիա .

Աչքդ արտասուէք բերանդ վրիտւր ,

Յոտար աշխարհ մնացիր թափուր :

Բայց դու Մուսայդ իմ վշտազգեսաց ,

Ի՞նչ կաս տրտում սեւով ծածկուած ,

Աչերդ խոժու դէմքդ անկղ ,

Ողողես դառն ցօղի հեղեղ :

Գլթա ինձի դու մի այդպէս ,

Մի դարձներ սիրոյս երես .

Մի քո սրտիդ վիրաց ցաւեր ,

Բերեր վէրքիս հեալը խառնել :

Ա՛հ երբ քեզ երբ Մուսայդ դողթան ,

Տեսնեմ զուարթ 'ւ 'ի ցնծութեան .

Ձեռքդ 'ի քնար ձայնդ երկնաձեւ ,

Հայրենեաց հուադ երբ պի՛ լսեմ :

Ե՞րբ սրբուելու կուզան ժամեր ,

Անմեղ արեանըս վտակներ .

Ե՞րբ կը ցամքի դիմացս արիւն ,

Այ՞ ի՞նչ տխուր ցաւոց դարուն :

Եղանակաց մէջ ամենէն  
Սիրուն ամիս Մայիս վսեմ ,  
Չեթող տեանել զուարթ օրեր .  
Սեւցուց նախ իմ պայծառ գիշեր :  
Եւ արգիլեց մարգաց վրան  
Ժուռ գալ պարել ն՛ երգաձայն .  
Ինչպէս դառներ դեռ նոր ծնած ,  
Շրջին խումբ խումբ ձայն արձակած :  
Կանուխ հասաւ սգոյ աշուն ,  
Կանուխ մեռաւ մանուկ դարուն .  
Անթիւ ցաւոյ հասաւ ամառ ,  
Խոցեցին դէմքս վիշտք անհամար :  
Երբոր մտայ դռնակէս ներս ,  
Հառաչանքներ փրթան սրտէս ,  
Սոխակն աղնիւ ողբիս ընկեր ,  
Ոգորմ ձայնը լացիս խառներ :  
Ա՛ն վախ երգէ ձայնն ուր հասնի ,  
Արիւն արցունք հորեր լցուի .  
Երկինք երկիր շարժին 'ի լաց ,  
Ողբան բաղդի այս մեծ հարուած :

Նոր ամսոյ նոր պարզ արշալոյս ,  
Բերաւ սգոյ ինձ վերջալոյս .  
Սիրտս կտոր կտոր ճմլած ,  
Զարկաւ գլխուս լուսնի դիմաց :  
Չեռքս 'ի ծնօտ դրած վշտահար  
Թէ շատ օրեր լամ անդադար ,  
Չը բուժիր այս բաղդին հարուած ,  
Չը դադրին իմ աչացս լաց :  
Ճակատադրիս իմ բաղդը սեւ ,  
Թողուց այսպէս զիս անարեւ .  
Մատաղ հասակս օրերս ծաղիկ ,  
Ի՞նչ ցաւ տեսաւ բաղմապատիկ :  
Երբոր նստիմ տարիքս համրեմ ,  
Շատ աղարծի անուն գիտեմ .  
Դեռ չը սովրած անունս սեւ ,  
Ինչէր տեսայ գլխուս վերեւ ,  
Կենացս անխորձ խեղճ նաւալար ,  
Կորուսի գիծս չը կայ յոյս ճար .  
Հասնիմ պիտի սէ բաղձանաց ,  
Յոյսս քեզի է ով Աստուած :

Սեւ տրտմութիւնն աչքիս վրան ,  
Շուտ երեւցաւ նշան մահուան •  
Պանդխտութեան աղս ու հացիկ ,  
Լեղի դարձաւ պատառս հատիկ •  
Չը մնաց ցաւ քաշեմ սիրով ,  
Օրերս անցնին ողբով լացով •  
Կարծես աշխարհ երես դարձուց ,  
Լոկ սուրբ Փրկչիս մնաց իմ յոյս •  
Վիճակ տխուր, ազէտք անթիւ •  
Աչերս բացի չբացի հաղիւ ,  
Օտար երկիր ընկած տեսայ ,  
Սիրտս հարուածի դարան գտայ •  
Կեանք ցնծութիւնն ինծմէ վերցան ,  
Սեւ օրերու ժամեր հասան •  
Պարզ երկինքս մութը սլատեց ,  
Գոռաց ամալը շանթ արձկեց •  
Կայծ թօթաիեց սրտիս խորեր ,  
Սեւ վէրքերու տեղաց նետեր •  
Կարծես մայրս սլատերազմի  
Համար ծնաներ իս • վնց ինծի •

Ո՛վ քաղցրալուր սրինգ Հայկեան ,  
Ո՞ւր են երգերդ երեկոցեան ,  
Որ քաղցրաձայն ներդաշնակով ,  
Հնչեցնէիր դաշտ լեռն ու ծով :  
Այն ատեն երբ քոյրերուս հետ ,  
Պարէի զուարթ խաղ միահետ ,  
Իբրև բնութեան գեղեցկուհիք ,  
Կարծես մերն էր երկիր ու երկինք :  
Հիմայ աի մը հողը անգամ ,  
Արաքսիայի շատ երեւցան .  
Կանանչ դալար մարգերու տեղ ,  
Տեսայ ես սոսկ արեան հեղեղ :  
Անիծեալ բաղդըս մահաշունչ ,  
Յերբ կապէ ինձ փուշերու փունջ .  
Այս քնչ սուրեր կը խաղցնէ ,  
Մատաղ սրտիս կրակ թափէ :  
Կուգայ արև յերկիր աիռի ,  
Երգին թռչներ խիստ բերկրալի .  
Բոլոր աշխարհ զուարթ ուրախ ,  
Ինձի բաժին մնայ ախ վախ :

# Ն Ո Ւ Ա Պ

## ՏԱՍՆՆԵՐԵՔԵՐՈՐԴ.

Ով սուրբ Մուսայք իմ հայրենեաց .  
Որ դարերէ 'ի վեր քօղուած ,  
Վեհ գիւցաղանց գերեզմաններ  
Քաշուած , քնարից փուշ էք փաթտեր :  
Մէկ ձեռք քնար , միւս կնանտոց ,  
Լարեր թուլցած , սրտիկ 'ի խոց ,  
Մասնէր անշարժ երբեմն աւանդ  
Կը հառաչէք տխուր միշտ վանի :  
Չուզէք երբէք տեսնել արեւ ,  
Չը տալ մէկին սիրոյ բարեւ .  
Լոկ Հրեշտակին Հայաստանեայց ,  
Որ ձեր ընկերն է աղաղղած ,  
Գիշեր ցերեկ ով դուք Մուսայ ,  
Սուրբ Սանդուխտին շիրմին վրայ  
Նստած կ'ողբաք . որ առաջին  
Կոյսն եղաւ Հայ , սուրբ արեան գին :



# Ն Ո Ւ Ա Պ

## ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Ով սուրբ Մուսայք իմ հայրենեաց ,  
Որ դարերէ 'ի վեր քողուած ,  
Վեհ զխլցաղանց գերեզմաններ  
Քաշուած , քնարից փուշ էք փաթտեր :  
Մէկ ձեռք քնար , միւս կնտնտոց ,  
Լարեր թուլցած , սրտիկ 'ի խոց ,  
Մասնէր անշարժ երբեմն աւանդ  
Կը հառաչէք տխուր միշտ վանխ :  
Չուզէք երբէք տեսնել արեւ ,  
Չը տալ մէկին սիրոյ բարեւ .  
Լոկ Հրեշտակին Հայաստանեայց ,  
Որ ձեր ընկերն է սգազգած :  
Գիշեր ցերեկ ով դուք Մուսայ ,  
Սուրբ Սանդուխտին շիրմին վրայ  
Նստած կ'ողբաք . որ առաջին  
Կոյսն եղաւ Հայ , սուրբ արեան գին :

Մէկզի թողած հօրն արքային ,  
Շքեղ պալատ փառքերն սնգին ,  
Թողլով այնչափ հարստութիւն ,  
Զոր խոստանար հայրըն սիրուն :  
Անհաշտ մնացած միշտ անոր հետ ,  
Հաշտուեցաւ Աստուծոյ հետ .  
Աշխարհիս սուտ փառաց փոխան ,  
Յանկաց երկնից արքայութեան :  
Կըռապաշտ Հայրըն Սանատրուկ ,  
Ոտքը ժողվեց ամեն վհուկ ,  
Ճար մը գտնել իւր գաւակին ,  
Որ չը հաւտայ Աստուածածնին :  
Սանատրուկ ինչ դառն ողբեր  
Կ'ընէր որդւոյն , թէ խենդեցեր .  
Կը պաղատէր ոտքը ինկած ,  
Գառնալ պաշտել իրեն Աստուած :  
Սանդուխտ կուսին Հայաստանեայց ,  
Սիրան Յիսուսի սէրը գրաւած ,  
Մոռցաւ իւր հայրը կըռապաշտ ,  
Գարձաւ եղաւ Աստուածապաշտ :

Ձը լսեց ողջ Հայոց ձայնին ,  
Որ կ'ողբային իրեն առջին .  
Սանատրուկին սիրտն իջեցնել ,  
Որ կ'սպառնար զանոնք ջարդել ,  
Ողորմէ՛ մեզ կ'արտասուէին ,  
Մի հաւատար անհաւատին .  
Մեր աստուածներ քեզի համար ,  
Պատրաստեր են ուխտեր հազար :  
Միթէ քեզի ինչ կը պակսի ,  
Ո՛վ հայկազուն արքայորդի .  
Քեզ զո՛հ ըլլանք մենք ամենքս ալ ,  
Ե՛կ դարձ հօրըդ գիրկը արդար :  
Գերի ըլլան քեզ որդիներս ,  
Եւ աղախին կոյս աղջիկներս .  
Մի բարկացներ հայրըդ միայն ,  
Ո՛վ գեղեցիկդ Սանդուխտ կուսան :  
Հազարաւոր ողբեր լացեր ,  
Թագաւորին արտասուքներ ,  
Սուրբ Սանդուխտին ականջներին  
Ձրի ձայնի տեղ կուգային :

Յափշտակուած երկնից սիրով ,  
Ճշմարտութեան պայծառ լուսով ,  
Մտաւ 'ի բանս , իրեն համար  
Արքայութիւն կարծես կ'երթար :  
Չը գտաւ ճար մ'արքայն . 'ի զնւր ,  
Սանդուխտ կուսին սիրտ շողաց սուր .  
Թափեց արիւնն 'ի Շաւարշան ,  
Հայաստանի հողին վրան :  
Իջաւ յերկնից լոյս Աստուծոյն ,  
Վառեց Հայոց զաւկին արիւն ,  
Հայ կուսանաց մէջ առաջին  
Սա Նահատակ Հայ աշխարհին :  
Եւ արդ ո՛վ դու Մուսայդ գող թան ,  
Կ'ողբաս անոր արեանն վրան ,  
Արժանի՛ , բայց . ե՛կ դու սէր իմ ,  
Ողբալ զարիւն Արաքսիային :  
Որ տղայական զուարճութեանց  
Չար դարանին բերանն ընկած ,  
Թափեց արիւնը ոչինչ տեղ ,  
Անձանօթ վայր տեղաց հեղեղ :

Եւ ո՛չ սրբոյն Սանդուխտի պէս ,  
Երկնից փառացը սիրակէզ  
Զոհուեցաւ . ո՛չ , չնչին քարին  
Վրայ թափեց արիւնն անգին :  
Ե՛կ հայրենի քնար ցաւագար ,  
Լարէ՛ թելերդ , լարք սիրահար .  
Ս՛ա իմ մասներս արիւնթաթախ ,  
Եղերերդել իմ հետ սխ վսխ :  
Ո՛վ վարդաթառ Սոխնակ սիրուն ,  
Հայրենեաց ո՛ր ջրոց ափուն  
Եղերք՝ թփոց վրայ թառած ,  
Տխուր քնարին հետ միշտ ողբաս :  
Սյաչափ դարէ օր մը Սոխակ ,  
Ձը լսեցի զուարթ արձագանք .  
Ձը լսեցի ձայնիկդ ուրախ ,  
Կը ճլվլաս հազար աւանդ :  
Գարձուր երգերդ աս երկնից տակ ,  
Զխ ողբն կամ՝ լե՛ր ախտիանք .  
Հերիք ողբաս ցերեկ գիշեր ,  
Հայրենեացըս աւերակներ :

Ե՛րբ պի՛ լսեմ ճնճղուկին ձայն ,  
 Որոնք մտած 'ի բնակարան ,  
 Մեր սեղանին փշրանքներէն  
 Կերակրէին . թռչնե՛ր վսեմ :  
 Ճըթ ճըթ ծըթ ծըթ ճռուողելով ,  
 Ազատ օդին մէջ թռչելով ,  
 Կ'օրհնէին մեզ երգօք հաղար ,  
 Մեր տանեաց մէջ կ'ըլլային թառ :  
 Ո՞ւր արեգակ իմ հայրենեաց ,  
 Ո՞ւր եւ լուսին պարք աստեղաց .  
 Որ Երասխայ պճրանքներուն  
 Վրայ փայլին շող շող , գոյն գոյն :  
 Որուն ափին մօտ երբեմն ես  
 Կը լուայի պաղ պաղ ոտքերս .  
 Կը տեսնէի խումբ խումբ ձկներ ,  
 Հեզ ալեաց հետ պար են բռներ :  
 Միրտս ինչ ուրախ զուարթ կ'ըլլար ,  
 Երբ վայլէի այս ձիրք հաղար .  
 Հիմայ ինչպէս չըլամ շողբամ ,  
 Երբօր յիշեմ իմ բնակարան :

Արահքս Արահքս հայրենեաց ջուր ,

Արագ արագ սահիս դէպ' ուր .

Գլորելով կ'իյնասս 'ի ծով ,

Գիտեմ լեցուած ես շատ սղով .

Գարձուր հոսանքդ յաշխարհ օտար ,

Սրբել արիւնն Հայուս թշուառ .

Որ սեւ հողին վրայ թափած ,

Կոծէ սիրտս կրակ դարձած .

Ո՞ւր վտակներդ արիւնալից ,

Ո՞հ ուր դէմքդ արտասուալից ,

Բեր խառնել դառն արեանըս հետ ,

Եկուր ողբա ինձ միահետ :

Չըլլայ որ տար երկրի հողեր ,

Ծծեն արեանըս հեղեղներ .

Գոնէ օտար երկրի վրայ

Նռան արիւնս ցամքած չըլլայ :

Թող հայրենեացս արեան գետին ,

Խմեն արիւնս ինչպէս շատին .

Գիտեմ քանի՛ քանի՛ կոյսեր ,

Քու եղերքդ նահատակուեր :

Ե՛կ արդե եւ դու առ արիւնն ալ  
 Խառնել հետ այն արեանց արդար :  
 Որոց հետքեր մինչեւ ց'այս ժամ ,  
 Կարմիր վարդի պէս վառ մնան :  
 Անոնք մեր Հայ երկրին համար  
 Սուրբ հաւատոյ սիրով վառեալ ,  
 Պատերազմի դաշտին վրան ,  
 Երկնից փառաց զոհեր եղան :  
 Բայց իմ վարքիս պակտութիւնն էր ,  
 Որ թափեց այս դառն արիւններ .  
 Տղայական անփորձութիւն ,  
 Մատնեց զիս այս քարին նկուն :  
 Ո՛վ քաղցր եթեր սէրս Հայաստան ,  
 Ե՛կ տե՛ս որդիդ քո Արաքսիան .  
 Արեան ծովի մէջ լողալով ,  
 Այրի մրկի քո կարօտով :  
 Գու զիւցազանց պերճ օրորոց ,  
 Վե՛հ յիշատակդ վսեմ Հայոց ,  
 Ողբամ . բայց քու գոգդ նստած ,  
 Եւ ո՛չ այսպէս պանդուխտ մնացած :



Քաղցր հայրենիք ցաւս սա է ,

Արիւնս օտար հող չը ծծէ .

Սա է կսկիծս թէ օտարին

Սշխարհի մէջ չըլլայ մեռնիմ :

Մի ով կարապ ձայնով տխուր ,

Ինձ բօթ կարդաս , մահուանս սեւ լուր .

Միթէ մեռնիմ արիւնս տեսած .

Վրէճս կ'առնու քարէն Աստուած :

Թող լին աչերս արտասուազին ,

Յօղեն արեան ցօղ դառնազին .

Թող փչէ ցուրտ հով ուր հանդչի

Մարմին թշուառ Արաքսիայի :



# Ն Ո Ւ Ա Գ

## ՏԱՍՆԵՒԶՈՐՍԵՐՈՐԴ.

Դարձիր սիրտ իմ դարձիր յայս վայր ,

Ուղղել ողբերդ ս'ն 'ի քո մայր .

Որ հայրենեաց երկնի ներքեւ

Կ'սպասէ քեզ տալու բարեւ :

Յիշէ մայրիկդ ցաւոց բերան ,

Երազէ զայն եւ եթ յայս ժամ ,

Որ քու սիրուդ հովերուն դէմ ,

Կարօտ առնել կուզէ քեզմէն :

Ո՞ւր ես մայր իմ մայր գգուանաց ,

Մայր աղետից մայր արտասուաց .

Ո՞ւր ո՛վ մայրիկ Արաքսիայի ,

Սրտիկդ ինչո՛վ կը ծածանի :

Որդւոյդ համար աղօթք կ'ընես

Թեւատարած , որ ողջ տեսնես .

Թէ գլուխդ բարձին դրած ,

Անուշ քնով ես խաղաղած :

Արդեօք ի՞նչ վեհ երազներով,  
Ի՞նչ սոսկալի տեսիլքներով  
Գէթ երազիդ մէջ դու կ'ուզես,  
Որ զաւակդ սիրով գգուես :

Արդեօք ի՞նչպէս կարօտանքով,  
Կը համբուրես սրտիդ գորով .  
Կամ կը տեսնաս որ թշնամին ,  
Չը թողուր զիս քեզի մօտիմ :

Քաղցրիկ մայր իմ ի՞նչ կ'երազես  
Մինակ որդիդ կարօտակէզ .  
Սուրով բիրով Արաքսիային  
Վրայ անխիղճք կը յարձակին :

Գու ալ տեսած խեղճ Արաքսիան ,  
Այս վշտին մէջ անօգնական .  
Կը պաղատիս գալ յօգնութիւն ,  
Քու վշտահար զաւկիդ սիրուն :

Մէն մի Աստուած կը հառաչես ,  
Մէն մի մարդիկ հասէք կոչես .  
Մէյմ'ալ տեսնաս որ Արաքսիա ,  
Արեան ծովի մէջ կը լողայ :

Այս տեսիլքին մէջ դեռ յանկարծ ,  
Արթննալով քեզ մեր գանասա .  
Հայրենի տան մէջ յանկողին ,  
Կ'սկսիս ողբալ խիստ ախրազին .  
Պատուհանին առջեւ նստած ,  
Լուր կը խնդրես երկինք դարձած .  
Կ'ողբաս երկնից որ քո երազ  
Բարին հանէ . եղուկ Աստուած  
Լուր կ'սպասես դուռը կանգնած ,  
Արտասունքով թրջել իմ գրած .  
Եւ համբուրել սրտիդ վրան ,  
Առնել կարօտ սիրոյդ միայն :  
Մայր . դադրեցաւ լրոյս գրեր .  
Չը մնաց այն փայլուն աչեր ,  
Չը մնաց այն որդւոյդ մատներ ,  
Թուղթի վրայ գրիչ խաղցնել :  
Գիտեմ մայր իմ կռուակ թռչներ ,  
Քեզի գոչես լուր տալ բերել .  
Ինչպէս պանդուխտ դարձաներին ,  
Ողբ յօրինել քո երազին :

Գիտեմ մայր իմ միտքը բերած .

Գժբաղղ ծնունդըս սգազգած ,

Կ'ողբաս իմ սեւ ճակատագիր ,

Լացով քնանաս ամեն իժիր :

Ոհ ես սգոյ մէջ եմ ծնած ,

Հայրս տեսնելու չարժանացած .

Նոր գերեզման մտած իմ հայր ,

Խեղճ Արաքսիան մտեր յաշխարհ :

Մայր իմ ասոնք ինձ կ'ըսէիր ,

Դառն արցունքի ծով թափէիր .

Լոկ փորձութեան համար եմ ծնած ,

Սոսկ սուգերու մէջը մեծցած :

Վեղերերգես գիտեմ մայր զիս ,

Լաց զարիպին գառն կսկիծ .

Կ'երգես սա ողբն մայր սգակիր ,

Որ բաժնած օրս արտատուեցիր :



# Ն Ո Ւ Ա Գ

## ՏԱՄՆԵԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԱՐԱՔՍԻԱՅԻ ՄՕՐ ՈՂԲԸ

Ո՞ւր այդպէս շուտ ազնիւ որդեակ ,  
Ուղղիս 'ի կայթ դետ կազաւ յարտ ,  
Սիրտդ զուարթ դէմքդ տխուր ,  
Ո՞ւր աղաւնիս նորաիւտուր :

Թողած մօր մը գիրկը մեղոյշ ,  
Եւ ծնողական գորովն անոյշ ,  
Դեռ մայրական խնամքէ պակաս ,  
Յո՞ր տար աշխարհ կը հեռանաս :

Մանկական միտքդ հազիւ արթուն ,  
Յուղիս քննել զիմաստութիւն .

Նոր մէջ սրտիդ իջած Սէր Յոյս ,  
Ո՞ւր փոյթ 'ի յոյզ աչաց իմ լոյս :

Հեղատարթ վարդի թերթեր ,  
Մինչ կարմրափայլ վառեն զեթեր ,  
Գարնան երկինք չաշնացած դեռ ,  
Կը բաժնուիս ո՞ւր ձմերել :

Գեղ մանկութեանդ պայծառ արիւնն  
 Հազիւ հասած հորիզոնին,  
 Առաւօտուդ քաղցր արշալոյս,  
 Շուտով մի՞նեց երազայոյս :  
 Մինչ երազս էր քո զուարթ օրեր,  
 Միջօրէիս դու գեղ պատկեր .  
 Ահա այսօր մօրկանդ գրկէն,  
 Հեռուն գաղթիլ մը կը տեսնեմ :  
 Հայրենազօւրկ թափառելով,  
 Նոր գտած գառներս մայելով,  
 Չը համբուրած գէթ 'ի կարօտ,  
 Խառնիլ կ'ուզէ արդ 'ի նոր հօտ :  
 Քրտանց շիթեր գեռ 'ի ճակատ,  
 Նոր դով հով մը շնչած յիմս այտ,  
 Յոտից փոշւոյն չը թոթուրված,  
 Ո՞ւր կ'երթաս լոկ բարեւ ձգած :  
 Որդեակ իմ, քո ազնիւ պատկեր,  
 Հազիւ գրկած սրտիս թերթեր .  
 Մինչդեռ ծագեց երեսս արեւ,  
 Խայթեց սրտիկս յետին բարեւ :

Մայրական քաղցր գլխոյն կէս կուշտ ,  
Հեռի հեռի կը փախչիս շուտ .

Նոր թոթովել սովրած լոկ մայր ,  
Երգել կ'ուզես 'ի թուփն օտար :

Դեռ նոր հանած խանձարուէն ,

Ու օրօրոցին խիստ կապերէն ,

Երեկ դադրած երգն իմ օրօր ,

Զքեզ որի հաւտամ այսօր :

— Հերիք օրելդ մայր ցաւագին ,

Միտիանքդ այս մէկ վերջին .

Օրէ մայր իմ սրաիդ վրան

Տալով համբոյր մ'ինձ բաժանման :

— Արդեակ իմ , քու շրթունքներդ են ,

Որ բաժանման ձայն մ'ինձ կ'ազդեն .

Դ՞ու ես Սէր իմ ձեռքդ յիս ուղղած ,

Վերջին համբոյր տալու կուզաս :

Աչաց իմ լոյս . գեղ աչքերդ են ,

Որ մօր մ'ափանց վրայ ցօղեն .

Այն կաթնածիծ շրթունքներդ են ,

Քեզ խանձարրող ձեռքս համբուրեն :



Ո՛վ օր . ո՛վ դու տխուր համբոյր .

Լաց թշուառ մայր լաց բաղդդ կոյր :

Բաց սրտիկդ երկինք տեսնայ ,

Քանի ցաւոց է ենթակայ :

Ա՛հ բաղդ ժպիրհ բաղդ դառնահատ ,

Քանի երորդ հարուածդ է աս :

Երկրորդն է որ պանդուխտ գրկէս

Անուշիկ սէրս յափշտակես :

Ճակտէդ փշած սեւ քամիներ ,

Ձիր ցան ըրին իմ ձագուկներ .

Մինչ թափառիմ ժողվել 'ի բոյն ,

Դու անխնայ ցրուես իսկոյն :

Ձլացար մօր մը յոյսը վերջին ,

Բաժնես անհայր սնած որդին .

Սիրոյ պատկերս յափշտակած ,

Ո՞ւր կը տանիս սիրտս աւերած :

Ա՛յս էր կենացս ճակատագիր ,

Յրուել զաւկներս օտար երկիր .

Ա՛յս էր մօր մը բաղդը թշուառ ,

Բաժնել զորդին յաշխարհ օտար :

Ա՛խ , ա՛յս որդւոյս բաղդն առաջին ,  
Ծնանիլ մերձ հօր սեւ դադաղին .  
Ա՞յս էր սիրոյս ճակատագիր ,  
Մօրը գրկէն կալ տարագիր :  
— Լաց մայրիկ լաց լոկ մէկ սա ժամ ,  
Եկաւ ատենն որ հեռանամ .  
Սրբէ մայրիկ ողբալդ հերիք ,  
Սուրամ թառիլ գիտութեան գիրկ :  
Մեղը շինել 'ի Բիւզանդիա  
Կ'երթամ . մի լաբ ճարը չկայ .  
Կ'երթամ մայր նոր մարդ մ'ըլլալու  
Քու ծերութիւնդ բարօրելու :  
Կուլաս դու բայց ես կը խնդամ ,  
Որ նոր շաւղի մէջ կը մտնամ .  
Գտնել հոնտեղ իմաստութիւն ,  
Մնաք բարեաւ մայր իմ սիրուն :  
— Ե՛կ որդեակ իմ , վերջին անգամ  
Փաթտեմ սրտիս քեզ մայրական .  
Ե՛կ համբուրեմ վեհ Արաքսիաս ,  
Ա՛ն հետ քաղցր գգուանք իմ այս :

Երթ որդեակ երթ 'ի պար 'ի կայթ ,  
Մտիր ուսման սրահն ազատ .  
Ե'րթ իմ մատաղ չքնաղ պատկեր ,  
Ի'նչ ընենք բաղդն այսպէս վճուեր :  
Ե'րթ ես նստիմ օրերս հաշուել ,  
Հինգ տարին ինձ տեւէ դարեր .  
Միայն յուսով սիրտս վստահ ,  
Տեսնել զքեզ դարձեալ անմահ :  
Գիտեմ չը գան հողին տակէն ,  
Կուգան սարին ետեւներէն .  
Այս չոր յուսով աչքս ետիս ,  
Կսպասեմ դուռն անոյշ զաւկիս :  
Դադրեցաւ ո՛ն ձայնիկդ անոյշ ,  
Արժեմ լսել , գիտեմ բայց ուշ . . .  
Սիրոյ քնարիդ թելերն այսօր  
Ծածկեց սեւ քօղ մը տարեւոր .  
Հէզ հայրենեաց երկնի ներքեւ ,  
Հեծէ երբեմն սրտիս վերեւ .  
Թռուցիր գոչէ ո՛ւր քո տատրակ ,  
Պանդուխտ օտար աստղերու տակ :

Արդ եւ ես հետ քնարիդ լուռ ,  
Երդեմ սրտիւ տրտում տխուր .  
Թէ քանի որ չեմ քեզի հետ ,  
Օրերս ցաւօք անցնին անհետ :  
Մինչդեռ անքուն քեզ կ'երագեմ ,  
Հողիս տխուր սիրտս չէ չէն .  
Մինչ կը բաժնիս ինէ ծովով ,  
Մայրիկդ հեծէ քեզ կարօտով .  
Գիտեմ որդեակ ճարը չը կայ ,  
Կը հեռանաս 'ի Բիւղանդիս .  
Մարդկութեան սարտքը կոչէ քեզ ,  
Թռիր Սէր իմ ցանկամ եւ ես :  
Լոկ գիտութեան համար Սեաւ ծով  
Բաժնէ զքեզ քաղցր իմ գորով .  
Ե'րթ որդեակ էրթ մաղթեմ ալեաց ,  
Տերամբ ցամաք ելնել անվնաս :  
— Ա՛յ իմ լուսնակ ծիծաղերես ,  
Կուսանդ երկնից գեղեցկատես .  
Պայծառ երեսդ ծագի միայն ,  
Իմ Արագսիս որդւոյս լրան :

Սփռէ մազերդ ալեաց վերեւ ,  
 Մէկդի քաշուին սեւ ամպոց թեւ .  
 Լայնատարած ծովին հաւսար ,  
 Մածանի դէմքդ լուսապայծառ :

Ա՛յ սեւերես անդուժ ալիք ,  
 Այնպէս խոժոռ արդեօք ծփիք .  
 Մատաղ ու անմեղ սրտի մը դէմ ,  
 Միթէ կ'ելլէք խոժոռադէմ :

Ձեր երեսէն եղերք ան վնաս  
 Քաշեն եւ սիրտք չեն խակ խաղաղ .  
 Գիշեր ցերեկ ծանր հարուածով ,  
 Կոփէք անխիղճ սրտի կիրքով :

Համատարած երկիր ու երկին ,  
 Ձեր ահարկու ձայնէն սարսին .  
 Փրփրած ալեաց բարկութեան ձայն ,  
 Անխնայ ան , ման կ'սպառնան :

Լսեց արդեօք սպահան հրեշտակ ,  
 Լսեց այս սեւ ձայնն իմ որդեակ .  
 Յուցնեն արդեօք դուժ ալիքներ ,  
 Տեսնոր որդեակ ջրի կոյտեր :

Ով Արեւելք\* ուր սահեցար ,  
Դաշտի վրայ թէ լերանց ծայր .  
Կօրօրեն քեզ սարերն ալեաց ,  
Մութ ամպերով ես ծածկուած :  
Արդեօք քանի խոր անդունդներ ,  
Գլորակելով սահիս վարվեր .  
Դանշտ մըն է այդ ուր կ'արշաւես ,  
Ալեաց լեռներ է կը պատուես :  
Ա՛հ փայտ չնչին փայտ ծովասահ ,  
Անմեղ որդիս քեզ է վատահ .  
Չլլայ շաւղէդ որ խոտորիս ,  
Անգութ ալեաց կը մտանուիս :  
Մի հեղատահ քաղցր ալիքներ ,  
Չ'տեսնէ հրեշտակս սեւ փրփուրներ .  
Մի խնայէք չը քաշեմ անի ,  
Տարէք որդիս յեզերս խաղաղ :  
Քաղցրիկ զեփիւռ լուսնի դիմաց ,  
Տուր զով համբոյրդ խաղաղ ալեաց .  
Արեւելեան առադաստներ  
Լեցուած մանկիկս ցամաք հանել :

\* Նաւը :

Մօր մ'ականջին սրտին տրտում,  
Զարնէ Տէր իմ ձայն մ'ի խնդում .  
Լսեմ թէ իմ որդիս միակ ,  
Հասաւ խաղաղ 'ի նոր ցամաք :  
Զայն արդեօք գիր սուր թեւ առած ,  
Գայ զիս գտնէ մաղթել կանգնած .  
Ո՛վ մատունք ո՛վ ձեռքեր օրհնած ,  
Ե՞րբ է այն ժամն օրն աւետեաց :  
Զեստ կոյս մ'ելած 'ի պատուհան ,  
Եւ ուշաթափ սիրոյն ճամբան .  
Ահա որդեակ մայրդ ալ տխուր ,  
Լուր կ'սպասէ կանգնած 'ի դուռ :  
Ե՛րթ որդեակ երթ վաղուկ ջուր մ'եռ ,  
Սահէ խաղաղ դարձ հովի պէս .  
Թռիր յեթերս ո՛վ Արաքսիս ,  
Ման գալ 'ի ծոց Աթենասայ :



# Ն Ո Ւ Ա Ք

## ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ

Ի՞նչ լուր կ'ուզես մայր ցաւազին ,  
 Դողան մաաներս , սիրտ տխրագին .  
 Լնը կ'սպասես եւ այս անգամ ,  
 Ուրախութեան թէ տրտմութեան :  
 Չարժեմ երբէք լուր մը այսպէս ,  
 Հաղորդելու մօ՛րդ սիրակէզ .  
 Այնպէս մէկ լուր որ սեւ շիրիմ ,  
 Ծածկէ վրադ աղնիւ մայր իմ :  
 Մինչդեռ հասաւ վերջին տարին ,  
 Որ մայրական դիրկըդ թռչիմ ,  
 Բեղմնաւորած իմաստութեամբ .  
 Հասաւ վտանդ հախանձութեամբ :  
 « Նկարագիր մ'աշխատութեան » ,  
 Գրած էի քեզ մօրս միայն  
 Խաւրել , պտուղ իբր իմ ուսմանց ,  
 Մէյմ'ալ կարդամ սրտով մ'երած :



Ն Ո Ւ Ա Պ

ՏԱՍՆԵՒԵՑԹՆԵՐՈՐԳ

ՆԿԱՐԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Մարդուս գլխուն բան մը չեկած,  
 Ամեն փորձէ ըլլայ սրահուած,  
 Իր բնական թէ խելքն ու ուժ,  
 Որչափ ալ շատ ու ապածուժ  
 Ըլլայ ու խիտ պայծառ փայլի,  
 Գեռ անկատար մարդ կը սեպուի,  
 Ասանկ տղայ կտրիճ ու ծեր,  
 Թէ եւ ըլլան բիւր հաղարներ,  
 Թէ աշխարհի բոլոր մարդիկ,  
 Քան ու անցնին մէկիկ մէկիկ,  
 Անոնց մէջ մարդն այն է միայն,  
 Որ մարդկութեան շնորհք կուտան:  
 Թէ կիրթ ըլլայ ու աշխատասէր,  
 Տեղեակ շատ քիչ բան է ուսեր,  
 Քաղաքագէտ է ու խոհեմ,  
 Ասանկ մարդիկ կ'ըլլան վսեմ:

# Ն Ո Ւ Ա Գ

## ՏԱՄՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ

Աշխատութեան տան յարգ պատիւ  
Ամեն բանի գլուխ ազնիւ:

Երբ գիշերուան անոյշ քունէն,  
Չերծած ելայ անկողինէն,  
Դեռ դուրս չելած քունն աչքերէս  
Մնալ ուզեր զուարթերես:

Ես թոթովնցի բիրս ու ելայ,  
Մէկէն աչքիս բան մ'երեւնայ .  
Մէկը տեսայ կայնած կեցած,  
Իբրու ինծի դէմ բարկացած .

Մէկ կցկտուր հասակ ու դիրք,  
Ընել կ'ուզէր հազար խնդիրք .  
Մոխիր չրթունք մը դողդոջուն,  
Որ զարհուրանք տայ ամենուն:

Կամաց կամաց ինծի դարձաւ,  
Բերնէն սա խօսքը լսուեցաւ .  
«Դեռ ժամանակ է ննջելու,  
Ըսաւ ինծի արդ ննջէ դու»:

Թէ որ ելլաս հարկաւ ներուիս ,  
Ծանր գործի մը մէջ ընկնիս •  
Որուն վերջըն ալ չես գտնար ,  
Փուճ տեղ կ'ըլլաս քունէդ դադար ,  
Ուրեմն դեռ հանգստացիր ,  
Անոյչ քունէդ մի դադարիր •  
Թէ քեզ կ'ուզես օգուտ խրատ ,  
Ըսած խօսքովս եղիր ազատ » :  
Ասանկ ասոր պէս խօսքերով ,  
Զիս համոզել կ'ուզէր շուտով •  
Բռնադատեց ինձ պառկելու ,  
Անկողինէս դուրս չելելու :  
Որչափ ասոնք կ'ըսէր ինձի ,  
Ես ալ դեռ զիս ժողված չէի •  
Դեռ գլխս իսկ խելք եկած չէր ,  
Ուր ըլլալըս չէի գիտեր :  
Յանկարծ կարծես զիս խայթեցին ,  
Սրտիս խորը թախանձեցին •  
Երբ գործերուս վայրկեան հասաւ ,  
Կարծես նոր ուժ վրաս եկաւ :

Մէկէն ելայ իմ մահիճէս ,  
Արգիլելով քունն աչքերէս ,  
Արեւուն ալ երբ լոյս ծագեց ,  
Բացաւ աչքերս մութն հալածեց ,  
Թմրութիւնս շուտ մը ցրուած ,  
Կարծես մարմնոյս ուժ մը ազդած .  
Երրորդութեան Սուրբ նշանով ,  
Աղօթեցի մաքուր մտքով :  
Լոյս մը պատեց աչքիս շուտով ,  
Մէկը տեսայ կանգնած իմ քով .  
Փայլէր չորս դին ճառագայթներ ,  
Լուսէն աչքերս կը մթագնէր :  
Տեսայ ճակտին վրայ այս բան ,  
Աշխատութիւն գրուած միայն :  
Հաղիւ գիտցայ թէ աս ով է ,  
Որ ինձ այսչափ սիրով կ'օգնէ :  
Դարձաւ «մի գու ըսաւ ինձի ,  
Երիտասարդ քեզ գթացի .  
Այսօր վրադ մեծ մեծ փորձանք ,  
Որուն ո՛չ թիւ ո՛չ կար համբանք ,

Մ ՆՐԱՅԻ ԿՈՒԳԱՐ ՃԱԼԵՐ ,  
ԹՅՈՒՍՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԼԵՅՐՆԵՐ :  
ԱՐԴԵՕՔ յԻՆՏ ԿՈՒ ԱՅՆ ՎՍՅՐԿԵԱՆ ,  
ՈՐ ՄԷԿՆ ԵԿՈՒ ԱՆԲԱՆ ԱՆՃԱՅՆ ,  
ՈՒՂԵՅ ՔԵՂԻ ԽՆԴՁԵԿ ՔՈՆՍՈՎ ,  
ԱՂԽԱՍՈՒԹԵԱՆ ՍԵՐՆ ՈՒ ԳՈՐՈՎ :  
ԲՈՂՈՐ ՍՊԱՐԻՎ ՈՒ ԲՈՂՈՐ ՕՐ ,  
ԱՄԵՆ ԳՈՐԾ ՔԵՐԸՂ ՓՈՒՈՒՈՐ  
ՉԳԵԱ ՄԷԿԳԻ ՈՒ ՔՆԱՆԱՍ ,  
ԱՂԽԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՆՐ ՈՂԲԱՍ .  
ՍԼՈՂ Կ'ՐԱՍՐ ԱՅՆ ՕՐԵՐՈՆ ,  
ԵՐԲ ԾՈՒՄԹԵԱՆ ԴԱՐԱՆՆԵՐՈՆ  
ՄԱՍՆՈՒԷԻՐ ՄԷՉՆ ԽՅՆԱՅԻՐ ,  
ԱՐԴԵՕՔ ԵՍՔԷՆ ԽՆՉ Կ'ՐԱՍՅԻՐ :  
ԽԵՂԾ յՈՒՍԱՏԱՍ ՎԻՉՄԵՐՈՒ ՄԷՉ  
ՄԻՆՅԵԼ ՏԻՄԱՅ ԲԻՒՐ ԵՂ ԵՒ ԷՉ  
ԱՆԳԽՈՒԹԵԱՄԲ ԸՐԱԾ ԷԻՐ ,  
ԱՆՃԱՐ ԳԱՒԻՂ ԽՆՉ ԿՐՆԷԻՐ :  
ԲԱՅԳ ՍԵՍ ՃԱԿԱՍՍ ԽՆՉ Է ԳՐԱԾ ,  
ԳՈՅՆ ԳՈՅՆ ԼՈՒՍՈՎ ՆՈՂ ՆՈՂ ՓՈՅՂԱԾ :

Նարդոս քրքում վարդ մանուշակ ,  
 Քան զամեն խունկ հոտն անուշակ -  
 Չը նմանիր աշխարհիս սուտ ,  
 Ծաղկի նման որ թոռմի շուտ :  
 Գարնան բացուած վարդի մը պէս ,  
 Միշտ կը փայլի զուարթերես .  
 Ահն ասով ես յաղթեցի ,  
 Քու թշնամիդ զոր ջնջեցի :  
 Յանկարծակի զքեզ զարթուցած ,  
 Գեղ մանկու թեանքդ գթացած .  
 Նկատեցիր դռն ան ատեն ,  
 Որ կծկտած աչքերուդ դէմ ,  
 Կը դողդողար բոլոր մարմին ,  
 Վախէր ինծմէ որ կը համխմ .  
 Ինչպէս հասած յանկարծակի ,  
 Զայն յաղթեցի յայն վայրկենի .  
 Հալածեցի բոլոր մարմնով ,  
 Կարծես քեզ վախ մը բերելով յ :  
 Ասոնց նման բարի խօսքով ,  
 Միտքս սրբեց փայլուն լուսով :

Բոլոր մարմինս ուժ մը առաւ,  
Աշխատութեան սիրով անբաւ •  
Ինչպէս սովբած էինք արդէն,  
Դարձեալ չուզեց զատուիլ ինձմէն :  
Պէտք թեւերն սրտիս վրայ,  
Միշտ անբաժան հետս մնայ •  
Ես ալ նոյնպէս համբոյր տուի,  
Անանկ համբոյր մը սիրելի,  
Որ ծուլութիւն խաղք խայտառակ,  
Ամօթապարտ մնաց մինակ :  
Միրտս հանդարտ ու խաղաղիկ,  
Աշխատութեան սիրով քաղցրիկ  
Ալ պարզեցաւ անդորրացաւ,  
Երջանկութեան բերքով լեցաւ :  
Խեղքս գլուխս ժիր ու առոյգ,  
Այն ինչ տեսայ ջանից հետ զոյգ,  
Դարձայ սրտիս գոհութեան ձայն,  
Քարող կարգալ աշխատութեան •  
«Ո՛վ օգնական իմ ըսի բիւր,  
Միշտ բարութեանց դու ես աղբիւր :»

Ես գոհութիւն տամ Արարչին ,  
 Որ քեզ հասուց ան վայրկենին •  
 Թէպէտ որքան գոհութիւն տամ ,  
 Դեռ փոխարէնն ըրած չըլլամ :  
 Դու ես յաղթող միշտ ծուլութեան ,  
 Եւ ինձ տուող ձիրք բարութեան •  
 Քանի որ կաս սէր փարելի ,  
 Վատ ծուլութիւն յաւէտ փախչի :  
 Թմրած ոգիք կը զօրանան ,  
 Քու շնորհօքդ կ'արիանան •  
 Քեզմով աշխարհ հաստատուեցաւ ,  
 Բոլոր արհեստն հնարուեցաւ :  
 Ո՛չ արդեօք սէր աշխատութեան ,  
 Բարձող բեռանց հսկայութեան •  
 Հարուստ գիտուն քաջ ու հզօր ,  
 Ամեն բոլոր արհեստաւոր  
 Քեզմով խայտան պարծին քեզմով ,  
 Սիրեն գովեն զքեզ յուսով :  
 Ո՛ դու անզին աշխատութիւն ,  
 Մեր նախահօր քրտանց առուն :



Դրախառնն դուրս անմխիթար,  
 Զքեզ գտաւ սոսկ մխիթար.  
 Երբ այն փառքէն զրկուեցաւ,  
 Քեզի պատուել պատուիրուեցաւ.  
 Քու երեսիդ քրտիւնքով հաց  
 Ուտես. հրաման յերկնից դուաց:  
 Դու այնչափ մեծ ու պատուաւոր,  
 Մեր նախնեաց ձեռքն եղար հզօր:  
 Նոյնպէս անկէ մինչեւ հիմայ,  
 Ամեն աշխարհ քեզ կը ցանկայ.  
 Ալ քեզ գիտեմք հանգստութիւն,  
 Փառք ու պատիւ զուարճութիւն:  
 Գիտութիւններ ամեն ծնար,  
 Բոլոր մտաց ոտք մը եղար.  
 Արհեստի մէջ ու գիտութեան,  
 Ազատափայլ կ'երթան կուզան:  
 Ամեն բանի դու թեւ եղար,  
 Բոլոր բարեաց ծայրը հասար.  
 Աշխարհս հազար փառքով լցիր,  
 Մարդոց ազգը փայլեցուցիր:

Դու ծովերէ ցամաքներէ,  
Գետնին խոր խոր ամեն տեղէ,  
Մեզ հանապազ ընծայ բերես,  
Առատ առատ կը սլարդեւես  
Գոհար ոսկի ու թէ արծաթ,  
Ամեն բերքերն եւ աղամանդ •  
Յորդորանօքդ երկրագործներ,  
Զօրացնեն իրենց թեւեր :  
Առաքեալներն անգամ սիրով,  
Աշխատեցան հոգւով սրտով,  
Ճշմարտութեան փառացն համար  
Քաշեցին վիշտ բիւր անհամար :  
Սակայն այն սուրբ աշխատութեան,  
Անուշ ու քաղցր ըլլայ վախճան •  
Մէկ վայրկենին յանկարծ եղան,  
Ամենքն մէյմէկ նուրբ լեզուաբան :  
Երբ սուրբ Մեսրոպ կը տաղնապէր,  
Թէ մեզ ճիշտ գիր ինչպէս գտնէր •  
Անդէն դու սուրբ աշխատութիւն,  
Տուիր անոր ոյժ եռանդուն :

Ծ'Լ ու կայնէ կ'ըսես անոր ,  
Կը զօրանայ մարմին բոլոր .  
Է՞ր Լքանիս ջան դիր փութան ,  
Անցիր ծովէն ցամաք գնան :  
Հարց փորձ ըրէ եւ դիր փափաք ,  
Որ հեղինակ մ'ըլլաս աւագ .  
Կըխոստանամ քեզ յաղթութիւն ,  
Քրով յաղթես դու ամենուն :  
Անն ասով պսակեցիր ,  
Հազար փառօք զարդարեցիր .  
Աշխատութեան սուրբ եռանդով ,  
Չանոնք ըրիր յոյժ ջատագով .  
Նոյնպէս քեզմով ալ Հայաստան ,  
Պայծառ սիրէ լոյս գիտութեան .  
Հիմայ խաղաղ ու թարմ ծաղկի ,  
Անոյչ հօտերն աշխարհ բուրի :  
Բիւր նորահաս փոքրիկ մանկունք ,  
Մէյմէկ պայծառ արեգակունք ,  
Հայաստանի ամպոց վրան ,  
Մշտապատար լոյս կը շողան :

Որոնք թ' եւ նոր փափուկ թեւեր,  
Առած թռչին մէկ վար մէկ վեր,  
Բայց օր անցաւ հասաւ ասուն,  
Չորն որ բորբ աշխարհք գիտեն,  
Քու շնորհքովդ կանաց կանաց,  
Մինչեւ հասան կամար փառաց :  
Բայց ծուլութիւն ծնող չարեաց,  
Ու հակառակ բոլոր բարեաց,  
Չգէ մարդիկ փորձութեանց մէջ,  
Մէջն ալ կրակ շու անշէջ .  
Սուտ աշխարհի ունայնութեան,  
Իրմով կ'ընէ ամեն չրջան .  
Մարդս դրաւանց բան մը կարծեա ,  
Գարնան բացուած վարդի մը պէս .  
Որ առտուանց լոյսն արեւուն ,  
Շողշողելով ափաի գոյն գոյն :  
Բոլոր մարդիկ իրեն քաշէ ,  
Անոյչ գոյնով զանոնք խարէ .  
Մէյմ'ալ նայիս ցորեկուան դէմ  
Գոյնը դարձած խիստ դալկադէմ ,

Սկսի թառամիլ անբեւն թափել ,  
Քաղցրիկ հօտը կորսնցունել .  
Երբ իրիկուան ժամերն համնին  
Իյնայ գետին մեռնի ինքնին :

Մարդուս կեանքն ալ ասոր նման ,  
Կէս օրուան դէմ շուտ կը չորնան .  
Հազիւ փառքով ուրախ պարծին ,  
Մէկէն 'ի մէկ թառամին ընկնին :

Կեանքը չըջան մըն է մարդուս ,  
Ուր որ դառնայ չունի լաւ յոյս .  
Քիչ պտըտի , շատ պտըտի ,  
Հազար կամ մէկ տարի ապրի :

Անանկ վճիռ մըն է աս որ ,  
Կ'առնէ կ'ընկճէ հաղարաւոր .  
Ասոր աղէկն է աշխատիլ ,  
Բարի կենօք մ'եւ եթ ապրիլ :

Որ յաւիտեան փառք կը բերէ ,  
Ու ոչ ցաւոց կրակին մատնէ :  
Ինչ ցաւալի բան կը տեսնենք ,  
Եթէ խելքով լաւ մտածենք :

Գեղեցկութիւնք այնր ծաղկանց ,  
Աչք կը խաբեն ու սիրտ մարդկանց .  
Ուտի չըլլայ որ մեզ պատրենք ,  
Ամեն բանի հետ սիրտ կապենք .

Բաց յԱստուծոյ սիրով պատիր ,  
Չի հանգչիր սիրտըդ լաւ գիտցիր :  
Ան ժամանակ կ'ընես հանգիստ ,  
Երբ Յիսուսին ծոցիկն ես նիստ :


Ծառայն պարտքին մէջն որ անհոգ ,  
Ջանցառութեամբ չընես իսկ հոգ .  
Անշուշտ մեղաց ծովերուն ծոց ,  
Օր կ'ըլլայ որ կրկնէ լաց կոծ :

Շատերը կան , անհոգութիւն  
Ի՞նչ մեղք կրնայ ընել հոգուն ,  
Կ'ըսեն ասանկ կ'ելան մէկդի ,  
Բիւր մեղք մեղքի վրայ դիզուի :

Բայց շատ աւաղ ու հազար վախ ,  
Որ սա կարծիքն եղած է խաղ ,  
Ասանկ մտքերն հազար ու բիւր ,  
Բղխեցընեն մեղաց աղբիւր :

Բնաւ ատեն մը ծոյլ մարդիկ,  
 Չեղան գիտուն գիտեմ հերիք .  
 Լաւ ճանչցած եմք որ բոլորն ալ,  
 Կորսուեցան մեզօք լցեալ :  
 Թողունք անոնց գործքն անլայել ,  
 Յաջողութեան մէջ միշտ անել .  
 Բաւական է թէ ծուլութեան  
 Ետեւէն բիւր չարիք կուգան :  
 Հիմայ լսէ որդի ազգիս ,  
 Նայէ որ միշտ աշխատ լինիս .  
 Զի այս ժամս որ վայելես ,  
 Մէյ մ'որ երթայ չը գար չիյտես :  
 Ճիշտ թռուցած թռչնոյ նման ,  
 Սոսկ երթալը տեսնես միայն .  
 Բոլոր աշխարհք , հարստութիւն ,  
 Անցած օրերն չբերեն տուն :  
 Ուստի խելքդ ժողովէ գլուխ ,  
 Մ'ըսեր , հոգ չէ ուշ թէ կանուխ .  
 Աշխատութեան բարի վարքով ,  
 Չեռք զարնելու փութան սիրով :

Թէպէտ կ'ըսես դու կ'աշխատիմ,  
Գիշեր ցորեկ յողնիմ տքնիմ •  
Բայց աչքերէս ինչ շահ հողոյս ,  
Երբ խաւարի շնորհաց իւր լոյս :  
Ամեն բարի սիրտ ունեցող ,  
Ճշմարտութեան ճամբան գիտցող •  
Բնաւ ձեռքը մէկ չար գործքի ,  
Չուզեր երբէք երթայ դպչի :





# Ն Ո Ւ Ա Գ

## ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ

---

Մինչդեռ գրիչս այսպէս երգեր ,  
Սկսեց անդուլ ջանքով երգել .  
Հասաւ յանկարծ բաղդը նսեմ ,  
Զարկաւ գլխուս գիշեր ատեն :  
Մարեց կենացս արեւն արդար ,  
Աւրեց դիմացս սլատիկեր պայծառ .  
Թաթխելով սիրտս մէջ սու արեան ,  
Այտերս ըրաւ վէրքի դամբան :  
Հիմայ ինչպէս չողբամ հաղար ,  
Երբոր յիշեմ ներկան ու անցեալ ,  
Ուստի պատուի բացուի գետին ,  
Վերցնէ երկրէս արեւս անգին :  
Լաց Արաքսիա լաց ու ողբան ,  
Այսուհետեւ ալ քու վրայ  
Թող չծագի արեւ լուսնակ ,  
Թողլով սրտիկըդ աւերակ ,

# Ն Ո Ւ Ա Գ

## ԳՍԱՆԵՐՈՐԴ

Ով օրիորդք քորք համազգեաց ,  
Ականջնուդ օղ իմ դառն հարուած .  
Մինչ չը տեսնէք փորձանք պէս պէս  
Անփորձ սեպուիք ինչպէս որ ես :  
Վտանդ ըսածդ մարդուս գլխուն  
Վերեւ կանգնած է օրն 'ի բուն .  
Թէ որ դանդաղ տեսնէ զքեզ ,  
Զարնէ դետին մէյ մ'ալ չելլես .  
Սրդ պէտք է միշտ արթուն կենալ ,  
Թէ տան մէջ եւ թէ ճանապարհ .  
Աստղաբաշխին պէս չըլլայ որ  
Աչքերնիս վերն ընկնինք 'ի հոր :  
Թէ որ կ'ուզես լաւ կեանք վարել ,  
Կարդահ այնչափ բարուց գրքեր .  
Պատմութիւններ ազգաց ամեն ,  
Մարդուս բարքին հայլի մըն են :

Որչափ որ շատ բան ուսած ես ,  
Քեզմէ մեծին խօսքը մռեա .  
Մեծեր գիտուն ալ թ'եւ չըլլան ,  
Բայց շատ անգրած տեսած շատ բան :  
Ահա եւ ես իմ մեծերու  
Խօսքին ակննջ չը կախելու ,  
Այս հարուածը գիտու եկաւ ,  
Ինծի անմահ խրատ մ'եղաւ :  
Մտքիդ մէջ ինչ որ ես գրեր ,  
Նախ պէտք խորհիլ յետոյ գործել .  
Անխորհուրդ գործ , անյոյս ցաւեր  
Դիզէ մարդու գլուխն 'ի վեր :  
Տղայու թիւնը նոր բոյս մ'է ,  
Ամեն հովի դիւրաթեք է .  
Օր մ'ալ նայիս գետնի վրան ,  
Ինկած չորցեր ճիւղով երկայն :  
Բայց երբ քովը փայտ մը տնկես ,  
Ու մարմինը անոր կապես ,  
Ո՛չ ցուրտ հովեր ո՛չ անձրեւներ  
Կարեն այն տունկը վնասել :

# Ն Ո Ւ Ա Գ

## ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ո՛վ օրիորդք քորք համազդեաց ,  
Ահանջնուդ օղ իմ դառն հարուած .  
Մինչ չը տեսնէք փորձանք պէս պէս  
Անփորձ սեպուիք ինչպէս որ ես :  
Վտանդ ըսածդ մարդուս գլխուն  
Վերեւ կանգնած է օրն իբրուն .  
Թէ որ դանդաղ տեսնէ զքեզ ,  
Զարնէ դետին մէյ մ'ալ չելլես :  
Արդ պէտք է միշտ արթուն կենալ ,  
Թէ տան մէջ եւ թէ ճանապարհ .  
Աստղաբաշխին պէս չըլլայ որ  
Աչքերնիս վերն ընկնինք ՚ի հոր :  
Թէ որ կ'ուզես լաւ կեանք վարել ,  
Կարդան այնչափ բարուց դրքեր .  
Պատմութիւններ աղգաց ամեն ,  
Մարդուս բարքին հայլի մըն են :

Որչափ որ շատ բան ուսած ես ,  
Քեզմէ մեծին խօսքը մռես .  
Մեծեր գիտուն ալ թ'եւ չըլլան ,  
Բայց շատ անբարձ տեսած շատ բան :  
Ահա եւ ես իմ մեծերու  
Խօսքին ականջ չը կախելու ,  
Այս հարուածը գիտու եկաւ ,  
Ինծի անմահ խրատ մ'եղաւ :  
Մտքիդ մէջ ինչ որ ես դրեր ,  
Նախ պէտք խորհիլ յետոյ գործել .  
Անխորհուրդ գործ , անյոյս ցաւեր  
Գիզէ մարդու գլուխն 'ի վեր :  
Տղայու թիւնը նոր բոյս մ'է ,  
Ամեն հովի գիւրաթեք է .  
Օր մ'ալ նայիս գեանի վրան ,  
Ինկած չորցեր ճիւղով երկայն :  
Բայց երբ քովը փայտ մը տնկես ,  
Ու մարմինը անոր կապես ,  
Ո՛չ ցուրտ հովեր ո՛չ անձրեւներ  
Կարեն այն տունկը վնասել :


Աստուած մարդուս ամեն գործին ,  
Դրեր Սահման մը երկնային .  
Անկէց երբ որ մը դուրս ելլես ,  
Քեզ վտանգին ծոցը գտնես :  
Նոյնպէս ամեն տեսակ խաղեր ,  
Ունին մէյմէկ յարմար չափեր ,  
Որն որ անշուշտ սկսածիդ պէս ,  
Պէտք է քուկին կշիռդ չաւրես :  
Ով քոյր 'ւեղբայր որ կը կարդաս  
Արաքսիայի այս դառն հարուած ,  
Գիտեմ որ մեծ ցաւ զգացիր ,  
Ուստի դուն ալ զգուշացիր :  
Ամեն բանի մէջ Արթնութիւն ,  
Մեծի խօսքին Ունկնդրութիւն .  
Գործերու մէջ Չափ եւ Սահման ,  
Մարդկան կենաց կշիռ Պայման :











0015663

2001

2013

2

2001

